

Երեսնամյա այսպես

ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

6 հուլիսի

Մարտելի համազգային դպրոցի ու Փարիզի
«Դպրոցասեր» վարժարանի սաներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մարտելի համազգային դպրոցի եւ Փարիզի «Դպրոցասեր» վարժարանի թվով 26 աշակերտի՝ ուղեկցությամբ Ֆրանսիաբնակ ազգային բարերար Սարգիս Պետոյանի։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ուրախություն հայտնեց Ֆրանսիայում գործող հայկական այս երկու դպրոցների աշակերտներին՝ հայրենիք եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած այցի առիթով։ Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց բոլոր նրանց, ովքեր մաս եւ բաժին ունեն աշակերտների կրթության եւ դաստիարակության գործում եւ նպաստում են նրանց ազգային, հայրենասիրական նկարագրի կերտմանը։

Անդրադառնալով հայեցի դաստիարակության եւ հայրենասիրության կարեւորությանը՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ աշակերտները, գտնվելով Հայաստանում, շատ լավ հնարավորություն ունեն մոտիկից հաղորդակից լինելու հայրենիքի իրականությանը եւ ազգային-հոգեւոր հարուստ ժառանգությանը։

«Հայրենիքը երաշխիքն ու ապահովությունն է հայ ժողովրդի հավերժ գոյության։ Անհայրենիք անձը նման է մեկին, ով ծնողներ չունի, իսկ հայրենիքի գավալը մշտապես պաշտ-

պանված է, որովհետեւ հայրենիքը պատրաստ է հովանավորելու, իր գիրկը բանալու սեփական զավակների առջեւ։ Ազգային պատկանելության առումով՝ հայրենիքն ազգի զավակի կենսագրությունն է», - ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ պատգամելով միշտ արժեւորել հայրենիքը եւ կապված մնալ նրան։

Իր հայրապետական պատգամը եւ օրհնությունը փոխանցելով աշակերտներին՝ Նորին Սրբությունը հորդորեց, որ ամեն ջանք ի գործ դնեն՝ օրինակելի ու հաջողված հայորդիներ լինելու եւ բարի օրինակ ծառայելու գալիք սերունդների համար։ Վեհափառ Հայրապետը նաեւ պատանիներին պատգամեց արդյունավետորեն օգտագործել իրենց ուսումնառության տարիները, որպեսզի ապագայում, իրենց առջեւ ունենալով տիար Սարգիս Պետոյանի բարի օրինակը, կարողանան օգտակար ծառայություն բերել հայոց ազգին, իրենց երկրին եւ հայրենիքին։

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց աշակերտներին եւ ուսուցիչներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին Հոռմի Սրբազան Զահարայայետ Ֆրանցիսկոս Պապի՝ Հայաստան կատարած այցին, Հայ Եկեղեցու առաքելությանը եւ ներկայիս գործունեությանը։

8 հուլիսի

Նուսասանի Հանրադատության դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Իոաննիս Տալիսին։

Ամենայն Հայոց Հայրապետը, հրաժեշտ տալով Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտող դեսպանին, գոհունակությամբ ընդգծեց Ի. Տալիսի բերած ազնիվ ծառայությունը երկու բարեկամ ժողովուրդների հարաբերությունների առավել սերտացման գործում, ինչպես նաեւ կարեւորեց Հայ Եկեղեցու նկատմամբ մշտապես ցուցաբերած ջերմ վերաբերմունքը։

Նորին Սրբությունը, իր հայրապետական օրհնությունը բերելով դեսպանին, նրան մաղթեց քաջառողջ կյանքի բազում տարիներ եւ

հաջողություններ հետագա ծառայության մեջ։

Շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ անձնապես Վեհափառ Հայրապետի ցուցաբերած ուշադրության համար՝ Հունաստանի դեսպանն իր հերթին նշեց, որ իր պաշտոնավարման ընթացքում մեծագույն սիրով եւ հարգանքով է մասնակցություն ունեցել Հայ Եկեղեցու կազմակերպած կարեւորագույն միջոցառումներին։

Հանդիպման անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական եւ Հույն Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա հարաբերություններին եւ գործակցությանը։

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

10 հուլիսի

ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորների



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ավելի քան 30 ուխտավորի՝ ուղեկցությամբ Բոստոնի Ս. Երրորդություն Եկեղեցու հոգեւոր հովիվ Վազգեն քն. Կուզույանի եւ Միսեստոյի Ս. Սահակ Եկեղեցու հոգեւոր հովիվ Թադեոս քն. Բարսեղյանի։

Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով ուխտավորներին, գոհունակությամբ նշեց, որ հաճելի է տեսնել նրանց ներկայությունը հայրենիքում եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում։ Հայոց Հայրապետը կարեւորեց աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը, որոնց շնորհիվ հայորդիները հնարավորություն են ունենում իրենց ուխտը վերանորոգելու եւ ոգեշնչվելու, ինչպես նաեւ՝ ազգային ինքնությանը առավել զորանալու։

Իր հայրապետական օրհնությունը բերելով

ուխտավորներին՝ Նորին Սրբությունը բարձր գնահատեց նրանց հավատարմությունը հայոց նվիրական սրբությունների եւ ազգային հարուստ ժառանգության հանդեպ։ Վեհափառը վերհիշեց նաեւ ԱՄՆ հայոց արեւելյան թեմ կատարած իր հովվապետական այցելությունները, որոնց ընթացքում մշտապես նկատելի են եղել սերը Հայ Եկեղեցու նկատմամբ եւ բացառիկ նվիրումն ազգային-եկեղեցական կյանքին։

Վերջում Նորին Սրբությունն առ Աստված աղոթքով մաղթեց, որ Տեոն Իր մշտական օրհնության ներքո պահի ու պահպանի ամենքին՝ սիրո եւ նախանձախնդրության բարձր գիտակցության մեջ։

Զրույցի ընթացքում Հայոց Հովվապետը պատասխանեց նաեւ ուխտավորների հարցերին։

Շարունակությունը՝ էջ 2



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

10 հուլիսի

ԱՄՆ Վուաթըր խաղաքից ժամանած ուխտավորների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մասաչուսեթսի Վուաթըր քաղաքից ժամանած ուխտավորների՝ ուղեկցությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Սահակ Ժ. վրդ. Եմիշյանի:

Վեհափառ Հայրապետին ներկայացնելով ուխտավորներին՝ հայր Սահակն անդրադարձավ նաեւ Վուաթըր քաղաքի պատմությանը՝ ընդգծելով, որ հայկական համայնքն այնտեղ ունի հնագույն անցյալ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական խոսքը փոխանցեց ներկաներին՝ ողջունելով նրանց հայրենիք այցելելու հանձնառությունը: Վեհափառ Հայրապետը չափազանց կարեւոր նկատեց նրանց կապը հայրենիքի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ՝

հորդորելով հայրենիքի տեր ու զավակ համարել իրենց: Նորին Սրբությունը նշեց, որ նման այցերը նաեւ մեծ նշանակություն ունեն հայրենաբնակ հայորդիների համար, ովքեր առանձնահատուկ ուրախություն են ապրում՝ տեսնելով, թե ինչպես են Սփյուռքում իրենց եղբայրներն ապրում հայաշունչ կյանքով:

Չրույցի ընթացքում անդրադարձ եղավ Հայոց երկրի շինության գործում Սփյուռքի ունեցած լուրջ ներդրմանը: Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ուխտավորներին՝ հայոց կյանքում նրանց բերած օգտաշատ ծառայությունների համար: Խոսվեց նաեւ Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերների եւ դրանց հաղթահարման ուղղված ջանքերի մասին:



11 հուլիսի

Նիժնի Նովգորոդի եւ Արզամասի միսրոպոլիսին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիժնի Նովգորոդի եւ Արզամասի Գեորգի միսրոպոլիտին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եգրաս արք. Ներսիսյանի:

Գեորգի միսրոպոլիտին ներկայացնելով Նորին Սրբությանը՝ Եգրաս արք. Եգրասյանն անդրադարձավ

նրա գլխավորած պատվիրակության՝ Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարած ուխտագնացությանը, ինչպես նաեւ միտրոպոլիտի հետ ունեցած սերտ գործակցությանը: Սրբազանն իր խոսքում տեղեկացրեց, որ Գեորգի միսրոպոլիտը մշտապես իր մասնակցությունն է բերել հայ համայնքի կյան-

քում տեղի ունեցող կարեւորագույն իրադարձություններին, ինչպես օրինակ՝ Նիժնի Նովգորոդի հայկական եկեղեցու օծման արարողությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարի գալուստ մաղթելով Գեորգի միտրոպոլիտին, անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին՝ համահունչ երկու բարեկամ ժողովուրդների դարավոր եղբայրական բարեկամությանը: Նորին Սրբությունը գոհունակությամբ փաստեց երկու Եկեղեցիների հովվապետների միջեւ առկա եղբայրական սիրո եւ համագործակցության մասին, որոնք իրենց անդրադարձն են ունենում նաեւ Եկեղեցիների միջնակական եւ միջհամայնքային հարաբերությունների վրա:

Իսկ Նիժնի Նովգորոդի եւ Արզամասի Գեորգի միտրոպոլիտը հավաստիացրեց, որ Հայաստանում եւ Մայր Աթոռում իրենք իրենց զգում են ինչպես տանը, հաղորդակցվում են ոչ միայն բարձր հոգեւոր արժեքներին, այլեւ մոտիկից զգում հայ ժողովրդի հյուրընկալ ոգին: Նա մեծապես կարեւորեց Հայ Եկեղեցու դերակատարությունը ազգային կյան-



քում՝ հավելելով, որ հայ ժողովրդի կենաց ծառը խարսխված է Հայ Եկեղեցու վրա, եւ առանց այդ ամուր արմատների՝ հավատքի եւ Ս. Եկեղեցու, հայ ժողովուրդը չէր կարող գոյատևել: Իր խոսքում միտրոպոլիտն անդրադարձավ նաեւ տարածաշրջանի հայ համայնքի ազգային-եկեղեցական աշխույժ կյանքին:

Վերստին իր հայրապետական գնահատանքը բերելով Գեորգի

միտրոպոլիտին եւ ներկա հոգեւոր սպասավորներին՝ Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ մեծապես պիտի տպավորվեն հայոց սրբավայրեր կատարած ուխտագնացությամբ՝ իրենց հետ տանելով անջնջելի հիշողություններ:

Վերջում Ռուս Եկեղեցու հոգեւոր սպասավորները հանդես եկան հոգեւոր եւ ժողովրդական տարբեր երգերի կատարումներով:

«Եղիցի լույս» մրցանակի հանձնման հանդիսությունը Մայր Աթոռ Սր Էջմիածնում

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սր Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, օրինությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի համար նախատեսված «Եղիցի լույս» մրցանակի հանձնման արարողությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված պատվավոր մրցանակն այս տարի շնորհվեց անվանի կինոռեժիսոր Ռոման Բալայանին:

այն հանձնվելու է հայազգի ակնավոր կինոռեժիսոր, սցենարիստ եւ պրոդյուսեր Ռ. Բալայանին:

Այնուհետեւ խոսք ասաց «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի հիմնադիր տնօրեն Հարություն Խաչատրյանը: Նա, ներկայացնելով Ռոման Բալայանի վաստակը, նշեց, որ շատ դժվար է լինել մեծ արվեստագետ, մեծ հայ եւ մեծ մարդ, ինչպիսին մեծարյալն է: Անդրադառնալով նրա ստեղծած ֆիլմերին՝ տիար Հ. Խաչատրյանը փաստեց, որ դրանց ազդեցության ներքո սերունդներ են կրթվել

նիսյանը: Դիմելով ներկաներին ու մեծարյալին՝ Նաթան սրբազանն ասաց, որ իր համար մեծագույն պատիվ է Մայր Աթոռում ողջունելու ներկաներին եւ կիսելու այն ուրախությունը, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Եղիցի լույս» մրցանակը գտավ իր հերթական հասցեատիրոջը: Խոսելով Հայ Եկեղեցու եւ մեծարյալի արվեստի միջեւ առկա կապի մասին՝ սրբազան հայրը փաստեց՝ այն բարձր բարոյական լույսը, որ բխում է նրա արվեստից, արդեն արժանի է դարձնում այս մրցանակին: Սրբազանը, իր գնահատանքը

նակներում, հոգեւոր, մշակութային եւ մարդասիրական արժեքների քարոզչության եւ համաշխարհային կինոարվեստում մեծ վաստակի համար, Հայաստանյայց Առաքելական Սր Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակը 2016 թ. շնորհվում է հայ ժողովրդի տաղանդաշատ զավակ, կինոռեժիսոր Ռոման Բալայանին:

Ապա Գեորգ սրբազանը կինոռեժիսորին հանձնեց «Եղիցի լույս» մրցանակը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ մրցանակակիրը՝ մասնավորապես նշելով.



Տերունական միասնական աղոթքից հետո «Ոսկե ծիրան» կինոփառատոնի մասնակիցներին ու հյուրերին ողջունեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեորգ Եպս. Սարգսյանը: Նա տեղեկացրեց, որ սույն մրցանակը հաստատվել է Նորին Սրբության օրհնությամբ, իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ստեղծված խորհրդի որոշմամբ էլ այս տարի

ու դաստիարակվել: Իր որդիական շնորհակալությունը հայտնելով Նորին Սրբությանը՝ «Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի հիմնադիր տնօրենն ընդգծեց փառատոնին բերվող կարեւոր գորակցությունը:

Ռոման Բալայանի կյանքին ու գործունեությանն անդրադարձավ նաեւ Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհան-



փոխանցելով նրա արվեստին, ասաց, որ վերջինիս ֆիլմերում վերելքներ ու թռիչքներ կան, որոնք խորհրդանշում են մարդու թռիչքը դեպի բարոյական, դեպի լույսը:

Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանն ընթերցեց «Եղիցի լույս» մրցանակի հայրապետական վկայագիրը, որով հաստատվում է, որ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջա-

«Ինձ համար մեծագույն պատիվ է այս սուրբ վայրում արժանանալ մրցանակի: Մինչեւ այստեղ ժամանելը՝ ես այդքան խոր չէի զգում այդ ամենը: Շնորհակալ եմ եւ շնորհակալ»:

Վերջում երաժշտական կատարումներով հանդես եկավ «Էջմիածին» երգչախումբը՝ դեկավարությամբ Արթուր սրկ. Վարդանյանի:

Ցերեկույթը եզրափակվեց Պահպանիչ աղոթքով:

Սկզբը՝ թիվ 5 - 11

4.

Հովհ. Շիրազը գրական ազգակցությամբ սերտորեն շաղկապված էր իր մերձավոր ու հեռավոր նախորդներին: Այդ բնածին ու հոր- դաբուն լի բանաստեղծի պատկերավոր ինք- նատիպ մտածողության կարեւոր յուրահատ- կություններից մեկն էլ այն էր, որ նա, նուրբ քնարերգու լինելով, միաժամանակ օժտված էր էպիկական ու դրամատիկական հզոր մտածողությամբ, կերպավորած հերոսների հոգեբանության բացահայտման բացառիկ ձիրքով: Իր այդ առավելությամբ նա կարող է մրցակցել իր անմիջական նախորդների՝ հայ բանաստեղծության ամենամեծերի՝ Թումա- նյանի ու Իսահակյանի, Վարուժանի ու Մե- ծարենցի, Տերյանի ու Չարենցի հետ, իսկ քնարական հերոսի ներաշխարհի հակասա- կան զգացումների կամ «ներքին բարոյական պատերազմի» պատկերման իմաստով նա միջնադարի «գրական հսկայի»՝ Գր. Նարե- կացու հարազատ շարունակությունն է:

Գեղարվեստական անակնկալ գյուտերի, շքեղ պատկերավորությամբ նկարագրի վարպետության հետ միասին նա դրամա- տուրգ բանաստեղծ է՝ լարված իրավիճակ- ներ եւ գործողության շարժում պատկերելու, երկխոսություններ եւ մենախոսություններ կառուցելու բացառիկ վարպետ: Նրա գեղար- վեստական մտածողության այս յուրահատ- կությունը, մյուսների հետ համադրված, դը- սեւորվել են «Սիամանթոն եւ Խեզգարե», «Սի- րանամե», «Հայոց դանթեականը» եւ «Անի» պոեմներում: Հատկապես վերջինում եւ «Թնդրակեցիները» պոեմում այդ յուրա- հատկությունը դրսեւորվել է առանձնակի ու- ժով, եւ էպիկական գործողությունների ամե- նից լարված պահերին հերոսները երբեմն էլ հանդես են գալիս գործողության ընթացքը բարձր լարման հասցնող առանձնացված կարճ կամ երկար երկխոսություններով ու ներքին մենախոսություններով: «Թնդրակե- ցիներում» այդպիսի սուր երկխոսություններ են ծավալվում մի կողմի՝ բանադրող դատա- տանական առյուծի կամ Օհան - Սմբատ Բագրատունի արքայի, Պետրոս Գետադար- ձին փոխարինած Հուսիկ Աղավունի կաթո- դիկոսի, Վահրամ Պաղվազունի սպարապե- տի, Գր. Մագիստրոս Փիլիսոփոսի եւ հակա- դիր կողմի՝ բանադրության համար շղթայա- կապ առյուծն անկողնից ենթ դառնում այս մեծ տե- սիլքին»,- Լեւոն հայր սուրբն իր խոսքում:

Ճեմարանի տեսուչն անդրադարձավ ու- սումնական հաստատության դասախոսա- կան կազմի՝ կրթական գործընթացին բերած ներդրմանը՝ երախտագիտություն հայտնելով դասախոսական ողջ անձնակազմին՝ ուսում- նական տարվա ընթացքում սրտացավ ու նվիրյալ գործունեության, ինչպես նաեւ տես- չության հետ համագործակցության համար:

Հայր Գարեգինը տեսչական ու դասախո-

Թնդրակյան շարժումը եւ նրա դարագլուխներին դասադասող գեղարվեստական համադասերը

Հովհ. Շիրազի «Թնդրակեցիները» դոկումենտ

Նիի, Հրանտյուշի եւ մյուսների միջեւ: Այնքան հմուտ է կառուցված բանավեճը եւ այնպիսի արվեստով, որ թվում է՝ բանավիճողներից յուրաքանչյուրը՝ իր տեսակետից, արդարա- ցի է, քանի որ նրանք տրամախոսությամբ ի- րենց ճշմարտացիությունն են ջանում ապա- ցուցել: Բանադրող ու մեղադրող կողմը՝ պե- տության ու եկեղեցու շահերը պաշտպանող «դատաստանական խորհուրդը», իր մտքի սրությունն ու եռությունն է դրսեւորում երբեմն ուղղակի անմիջականությամբ, երբեմն՝ սար- կազմի հասնող հեզանքով ու թունալից, խայթող ծաղրով, իսկ պաշտպանվող թոնդ- րակյան կողմը՝ իր արդարացիությունն ա- պացուցելու հետ միասին, շղթաներից ա- զատվելու համար, ջանում է արդյունքի հաս- նել՝ երբեմն գուր շարժելով, կեղծ համաձայ- նության ու դարձի խորամանկ խոստումնե- րով, երբեմն էլ՝ նրանցից ոչ պակաս հեզանե- րով: Ահա արքայի եւ Չարեհավանցու բանա- վեճ-երկխոսությունից մի բնորոշ դրվագ.

Բայց շատրվանեց դատավորն՝ արքան.
- Աչքերիդ սուրը պատյանում պահիր,
Ինձ տեր կանչելով՝ քեզ մի՛ գրահիր.
Ձեր զինված խանդով
Ազգ պառակտում,
Ո՛րք էիք ձգտում
Այն էլ այս ժամին...
... Այս տարածամիս ի՞նչ թոնդրականալ,
Երբ կուզեն Անվո դռներն էլ բանալ,
Երբ սեղանի գորբն էր իմ վրա գալիս,
Ո՛րք էիք դուք էլ ինձ վրա տալիս՝
Պոկելով անզեն խաչերն իմ այնքան:
Ի՛նչ վեճի ժամ է, այն էլ՝ թոնդրակյա՛ն,
Որ ազգ, հայրենիք էլ չի ճանաչում:
- Հէ՛, ճանաչում ենք, իմաստուն արքա,
Ուրիշ բան էինք մենք այնպես տեսչում:
- Ի՛նչ բան... վանքերիս խաչե՛րը ոսկյա,
Երբ շղթայված է ծովն էլ Տարոնի՝
Ո՛րք էիք նստում նավը Զարոնի,
Որ ազգն հանեիք,
Դժո՛խք տանեիք:
Ազգի նեղ ժամին՝ ազգին տրոհում,
Ո՛րմ վրա էիք անմիտ գրոհում
Եվ այն էլ զինված,
Ո՛րվ դու անաստված,
Ի՛նչ վեճի դար է, երբ հույսն է գոցվել,

Երբ օտարն իմ իսկ երկրում
ամրոցվել,
Երբ թուրքը խլել ծովը իմ Վանա,
Տեսչում է խմել ծովը Սեւանա:
Դուք ո՛րն ջաղացքի ջուրն եք դեռ
դառնում,
Երբ վանքի խաչե՛ կոկորդն եք
բռնում:
(Թ., էջ 53-54)



Բարեմիտ ընթերցողն ինքը կա- րող է որոշել, թե 1950-ականների շիրազյան այս հարցադրումները որքանո՞վ են արդիական, ում եւ ո՞ր ժամանակների համար են գրված: Թեժացող բանավեճում քնն- վում է եւ կուսանոցների խնդիրը: Բախվում են կաթողիկոսի, սպա- րապետի եւ թոնդրակեցիների տեսակետ- ները: Կաթողիկոսի պնդմամբ՝ թոնդրակե- ցիների մերժած կուսանոցները ազգի սը- բության ամրոցներն են, միևնույն կուսա- նոցների դեմ բողոքում են տարբեր նկա- տառումներով: Սպարապետը նաեւ տա- գ- նապում է, որ անսանձ վայելքի հորձանու- տը նետված թոնդրակացած կանայք չեն մայրանում, ազգը ամառում է, հայ զինվոր չի ծնվում, ու հայ զորք չի ստեղծվում՝ գեր- ված հողերը ետ բերելու եւ հայրենիքն ու նրա պետական սահմանները պաշտպանե- լու համար:

Մի պահ այդ հարցում, թվում է, համա- միտ են սպարապետն ու բանադրվող թոնդ- րակեցիները, սակայն կուսանոցների դեմ բանակոչվում տարբեր են մոտեցումն ու նպատակները: Աղանդավորները չունեն հայ- րենիքի գիտակցություն եւ կանանց ազա- տությունն էլ պահանջում են ոչ թե տղա- մարդկանց հետ իրավահավասարության, այլ նրանց համայնացման ու սեռական սան- ծարձակությունների համար, անգամ մերձա- վոր արյունակից բույր ու եղբոր, մայրերի ու զավակների, հայրերի ու աղջիկների արևա- պիղծ «սեռական մտերմություն» էին քարո- ճում: Ա՛յս նպատակով էին թոնդրակյանները դեմ կուսանոցներին եւ ոչ թե ընտանիքների շատացման եւ ազգի ծնելիության աճի կամ կուսակրոն սրբության:

Միևնույն սպարապետի համոզմամբ՝ լավ էր, որ ամեն կուսանոց «ծնի գորանոց»: Պահը թելադրում է, որ բանադրվողներն էլ ինքնարդարացման պահին դատապար- տեն եկեղեցու գործունեությունը՝ ազաի բռ- նագավթումներով գյուղացիների հողատա- րածները վանքապատկան դարձնելով՝ ապ- րուստի միջոցներից նրանց զրկելով: Բայց նրանք ձեռնադրեցին, հանրության առջեւ ցուցադրաբար խոսում են նաեւ հայրենիքի ցավից, պետության հոգսերից, իբր իրենք էլ են մտահոգ համազգային խնդիրներով: Տե- սե՛ք, թե արքային ու սպարապետին ինչպե՛ս է երկրիմի հաճոյանում «նոր Հիսուս» հոր- ջորջված սեւ ու կապույտ աչքերով իրեշը՝ Սմ- բատ Չարեհավանցին՝ բողոքելով կուսանոց- ների ու վանքերի դեմ:

Կուսանոցներն հայոց անծին
Ձուր են թուրքաց ջրադաջին,
Կույսը պիծե՛ Է, երբ չի ծնում,
Չորք չի ծնում ազգի համար,
Պիղծ է թելուզ մենաստանում,
Բյուր կուսանոց չարժե մի մայր:
Մի բռն անծին աղ էլ չարժեն
Կուսանոցներն աստվածաշեն...
Եվ ծիծաղեց թուխ մորուսը.
- Համ է՛ մեղք չե՛ս, որ կույս մնաս,
Մինչեւ մահը չմարմնանա:
(Թ., էջ 67)

Շարունակությունը՝ էջ 5

Հուլիսի 6-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում կատարվեց ճեմարանի՝ 2015-2016 ուսումնական տարվա փակման հանդի- սությունը:

Արարողությունը բացվեց Տերունական միասնական աղոթքով, ինչեցին ՀՀ եւ ճեմա- րանի օրհներգերը: Ապա խոսք ասաց ճեմարա- նի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

«Յուրաքանչյուր ուսումնական տարվա ա- վարտ իր հետ խառը զգացումներ է բերում ճեմարանական մեր ընտանիքի կյանքում: Հիմնականում այդ զգացումները շաղախված են ուսումնական ու հոգեւոր ձեռքբերումների բերկրանքով, ինչպես նաեւ՝ բացթողածը, թե- րացածը լրացնելու, շտկելու միտումով:

Այսօր Գեւորգյան հոգեւոր ճեմարանը փա- կում է 2015-2016 ուսումնական տարվա իր մեկամյա պատմության գիրքը՝ այն նորովի, նոր սպասումներով վերաբացելու խանդա- վառ ակնկալիքով:

Անցած տարվա ընթացքում, միանալով այս հաստատության տեսչության առաքելու- թյանը, ինձ համար վերաբացահայտեցի, որ Գեւորգյան տեսիլքով հիմնված այս ճեմարա- նը՝ որպես դարբնոց ոգու եւ մտքի, իր անվա- րան նավարկությունն է կատարում Տիրոջ անդաստանում, ուր յուրաքանչյուրս՝ որպես հավերժի ճամփորդ, պատմության մի հատ- վածում մասնակից ենք դառնում այս մեծ տե- սիլքին»,- Լեւոն հայր սուրբն իր խոսքում:

Ճեմարանի տեսուչն անդրադարձավ ու- սումնական հաստատության դասախոսա- կան կազմի՝ կրթական գործընթացին բերած ներդրմանը՝ երախտագիտություն հայտնելով դասախոսական ողջ անձնակազմին՝ ուսում- նական տարվա ընթացքում սրտացավ ու նվիրյալ գործունեության, ինչպես նաեւ տես- չության հետ համագործակցության համար:

Հայր Գարեգինը տեսչական ու դասախո-

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2015-2016 ուսումնական տարվա փակումը



սական կազմի եւ ճեմարանականների անու- նից ճեմարանի եւ քահանայից պատրաստու- թյան լսարանի շրջանավարտ սաներին մաղ- թեց իրենց կյանքն ու ծառայությունը ուղե- նել Ս. Գրքով եւ գորաքնել աղոթքով ու Տիրոջ հետ անբեկան հաղորդությամբ:

Այնուհետեւ ճեմարանի տեսուչն անդրա- դարձավ ուսումնական տարում արձանագր- ված ձեռքբերումներին, որոնց թվում են՝ «Գե- տրգյան ճեմարան» էլ. պարբերականի թո- դարկումը, Նյու Յորքի Ս. Վլադիմիր ուղղա- փառ ճեմարանի հետ համագործակցության համաձայնագրի ստորագրությունը եւ ուսա- նողների փոխանակման ծրագրերի մշակու- մը, ճեմարանի տարեգրքի խմբագրումն ու

տպագրությունը, արտադասարանային տարբեր դասախոսությունների ու միջոցա- ռումների կազմակերպումը՝ Օքսֆորդի, Ստ- րասբուրգի եւ միջազգային հեղինակավոր այլ հաստատությունների, ինչպես նաեւ Հա- յաստանի տարբեր բուհերի հյուր դասախոս- ների մասնակցությամբ, «Շողակաթ» հե- ռուստալնկերության հետ համատեղ «Դա- սախոսություններ ճեմարանում» խորագրի ներքո տեսագրված եւ հատուկ ձեռագրված դասախոսությունների շարքի պատրաստու- մը, ճեմարանիցների այցելությունները մի- ջազգային ու հայաստանյան բարեսիրական մի շարք կազմակերպություններ, ինչպես նաեւ՝ սոցիալական ծառայությունն էշմիած-

նի ու շրջանների կարիքավոր ընտանիքնե- րին եւ այլն:

Այնուհետեւ երաժշտական կատարումնե- րով հանդես եկան ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ՀՀ արվեստի վաստակա- վոր գործիչ Հարություն Թովիկյանի, եւ «Էջ- միածին» երգչախումբը՝ ղեկավարությամբ Արթուր սրկ. Վարդանյանի: Ուսանողության անունից խոսք ասաց ավարտական լսարանի սան Մանավազդ սրկ. Մկրտչյանը, իսկ Թով- մաս Առաքելյանը (1-ին լսարան) ասմունքեց Պ. Սեւակի «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաս- տեղծությունը:

Հանդիսության ընթացքում տեղի ունեցավ նաեւ նվիրաբաշխություն. ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ուսման մեջ բարձր առա- ջադիմության, կարգապահության եւ այլ ար- ժանիքների համար պարգևների արժանա- ցան տարբեր ուսանողներ:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հա- յոց Կաթողիկոսի հայրապետական պատգա- մի ու օրհնության խոսքով:

Գոհունակությամբ անդրադառնալով անց- նող տարում ճեմարանում իրականացված արդյունավոր աշխատանքին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատու- թյունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյա- նին եւ տեսուչ հայր սուրբին՝ իրենց նախան- ձախնդրի ու նվիրյալ աշխատանքի համար, տեսչական անձնակազմի ներկայացուցիչնե- րին, դասախոսական կազմին եւ հատկապես ճեմարանականներին, որ այս ուսումնական տարեշրջանը փորձեցին լավագույնս օգտա- գործել իրենց անձերի ծառայությամբ, գիտե- լիքի ամբարանը:

Շարունակությունը՝ էջ 4

Մարո ԱԼԱԶԱՆ ԻՄ ԿՅՎՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 7-9, 11

ՔՐԴԵՐԸ

Հեռվից հրացանի կրակոցի ձայներ լսվեց: Կանանցից մեկը կտուրը բարձրացավ՝ իմանալու բանի էությունը, եւ սարսափահար ներս վազելով՝ ասաց.

- Վա՛յ մեզ, հրացանավոր քրդեր են, Աստված մեզ էլ բեթարից ազատի:

Կանայք սենյակի դուռը պինդ փակեցին եւ երկանքի ծանր քարերը դռան դեմը դրին եւ լուռ ու սարսափահար արտասվեցին:

Քիչ հետո բակում լսվեցին քրդերի բարձրագոռգոռ խոսակցությունը եւ ցիւնիկ քրքիջը, ապա մոտեցան տան դռանը եւ հրացանի կոթերով հարվածեցին. ներսից ոչ մի պատասխան, ոչ մի ձայն: Սարսափահար մայրս ինձ թաքցրեց ոտքերի արանքում եւ ծածկեց իր փեշի քղանցքներով: Երկու երիտասարդ՝ բարձրահասակ, թիկնեղ քրդեր, տան դուռը բարձրացրին եւ մի կողմ շարտեցին, ապա ձեռքերը խանչալներին դրած՝ սպառնալից հայացքներով նայեցին սարսափահար կանանց, հայհոյեցին, հրմշտեցին եւ ապա իրենց ձեռքերին ու խանչալներին ազատություն տվեցին: Կանայք ահասարսուռ իրար հպվեցին եւ աղիողորմ լացով դիմեցին նրանց.

- Քիրվո (ախպեր), խնայեցեք, խեղճ ենք:

Ի պատասխան նրանց խնդրանքի՝ քրդերից մեկը հարձակվեց ինը տարեկան մի աղջկա վրա, կապեց նրա ձեռքերն ու ոտքերը, թեւի տակ դնելով՝ տարավ եւ կապեց ձիու թամբին: Աղջիկն անզուսպ ձայնով ճչում էր: Խելակորույս մայրը, այդ տեսնելով, քրդի ոտքերի մոտ փռվեց եւ համբուրելով նրա կեղտոտ ու փոշեպատ տրեխները՝ խնդրեց ազատ արձակել դստերը: Որպես պատասխան՝ քուրդը դուրս քաշեց խանչալը եւ գլխատեց աղջկա մորը...

Մի քանի աղջիկների եւ հարսների մերկացրին եւ կողքի սենյակը քարշ տվին... Մնացած կանայք, վիշապի առջեւ գցած կենդանի ճագարների պես կողք կողքի կծկված, իրենց օրհասական վախճանին էին սպասում: Ես, մորս ոտքերի արանքում կուչ եկած, նրա լայն ու ծալքավոր հագուստի վրա գույգ անցքեր բացեցի, որ տեսնեմ քրդերի զագրեղի արարքներն ու գազանությունները:



Այնուհետեւ մորս ստվերը դարձավ՝ նրա հետ քայլում, նրա հետ նստում, նրա հետ պառկում ու քնում էի:

Այդ սարսափները տեսնելով՝ մայրերն իրենց աղջիկներին թաքցնում էին թոնիրներում, ամբարներում եւ ջրհորներում: Մայրս գնաց ջրհան դուռը բերեց, ինձ ծնկներին դրած՝ ասաց.

- Մարո՛, բալի՛կս, վեդրոյի մեջ նստի, քեզ ջրհորը իջեցնեմ, որ քրդերը քեզ չտանեն ձիուն կապեն ու ծեծեն:

Ես, սարսափելով ջրից ու ջրհորի մթությունից, մորս դիմադրեցի.

- Ո՛հ, չե՛մ իջնի, սատանաներն ինձ կտանեն եւ ջրհորի մեջ կխեղդեն, չե՛մ, չե՛մ իջնի, շորերիդ տակը կթաքնվեմ, եւ քրդերն ինձ են տեսնի:

- Մարո՛, բալի՛կս,- համոզում էր մայրս,- ջրհորի մեջ ջուր չկա, այնտեղ են լցված մեր տեղաշորերը, հագուստները եւ կարպետները, դու չես խեղդվի, այնտեղ ոչ մի սատանա չկա, ես միշտ ջրհորի մոտ կկանգնեմ եւ քեզ հետ կխոսեմ:

Լացով ու սարսափով համաձայնեցի եւ դուլի մեջ նստած՝ ջրհորը իջա, բայց ջրի փոխարեն փափուկ անկողիների վրա ընկա:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱԿՈՒ ՕՏԱԿԱՆ. ԳԹՈՒՂԻ ՀԵՔԻԱԾԸ

Սկիզբը՝ թիվ 11

Իր տարբեր գործերում Օշականը բազմիցս հիշել է մարդու՝ կյանքում երազ ունենալու կարելության մասին, եւ որ առանց դրա նրանք ողորմելի արարածներ են: Հեքիաթներում, սակայն, գրողը հանգում է այն մտքին, որ երազ ծնում է մարդկային տկարությունը: Հակասական են նաեւ ամուրի աղջիկներին տված բնութագրումները: Նա երբեմն փորձում է արդարացնել, երբեմն էլ՝ մեղադրել նրանց: «Պառաւիս անծծքը» պատմվածքում նա գրում է, թե ամուրիների ցավն ու տառապանքը խորունկ են: Իսկ «Արեւն ու լուսնկան» հեքիաթում խտացնում է «տուն-մնայ» (չամուսնացած) կամ մերժված աղջիկների նախանձի գույները: «Նախանձը կուպրե ծաղիկ մըն է, որ աղջիկներուն հոգիին մէջ շատ անգամ կը ծաղկի» (էջ 394): Չար նախանձի ահավոր հետեւանքները ցույց տալու համար, որպէս հեքիաթի գործող անձինք, Օշականն ընտրում է երեք քույրերի՝ կարծես ընդգծելու նրանց հոգու առնությունը:

Պետք է նկատենք մի փաստ. չնայած այն հասկանալի, որ Օշականի «Խորհուրդներու մեհեան» ժողովածուում գետեղված գործերը որպէս հեքիաթ են ընկալվում «թեականորեն» (տե՛ս Կիմ Աղաբեկյան, Հակոբ Օշական, Եր., 2006, էջ 72), ունեն հեքիաթին բնորոշ ինչ-ինչ առանձնահատկություններ: Սակայն ժողովածուում կա երկու պատմվածք՝ երկուսն էլ «Հին պատմություն» վերնագրով, որտեղ հեքիաթին ամբողջությամբ փոխարինելու է գալիս գյուղի դաժան իրականությունը: Հետագայում հայացք ձգելով դեպի իր գյուղը, մանուկ օրերի իր տպավորություններին գումարելով հասուն տարիքի իր դատողությունները՝ Օշականը քննում է իր գյուղի մարդկանց սովորությունները, բարքերը, մարդկային հարաբերությունները եւ գնահատական տալիս դրանց: Ինչպէս «հին օրերու գիրք մը» կամ «հին օրերու բերան մը», Օշականը պատմում է մի աշխարհի մասին, որը նրա գյուղն է: Եվ ամեն անգամ, երբ մտքով հետ է գնում «դէպի արուած երջանկութիւնը մեր գեղին» (էջ 411), ցավ է ապրում խեղված ճակատագրերի ու կործանված գեղեցկությունների պատճառով, որոնք զոհ են գնացել սնահավատությանը՝ ողջ կյանքն անցկացնելով դառնության եւ միայնության մեջ, զրկված լինելով սիրած մարդկանցից, սիրած զբաղմունքից, բնության գեղեցկությունները վայելելուց: Բայց կյանքի ոչ մի անարդարություն այնքան ցավ չի պատճառում նրան, որքան գյուղի բացառիկ գեղեցկությունների կորուստը:

Ավանդությունն արմատավորված էր դարեր ի վեր: Օշականը պատմում է գրույցներ, որոնք չի էլ հիշում, թե երբ եւ ումից է լսել: Բայց պատ-



մոհն ով էլ լինի, զուտ պատմող է եղել եւ անտարբեր՝ «գոհերի» հոգի կրծող ցավի նկատմամբ.

«Ի՛նչ միամիտ են թուղթերը, եւ որքա՛ն անխելք են պառնալերը» (էջ 418): Այս մարդկանց տառապանքն այլ էր, կարելի է ասել՝ կրկնակի, քառակի: Իր կյանքը փոխելու համար մարդը կարող է տարբեր միջոցներ ձեռք առնել, չհամակերպվել իրավիճակին, ըմբոստանալ մարդկանց դեմ, պահանջել: Սակայն Օշականի հերոսներից շատ-շատերը, որոնք հիմնականում իրական անձինք են եղել, ստիպված էին հոգում լռեցնել ոչ միայն սովորական մահկանացուի բնորոշ ցանկությունները, իղծերն ու փափազները, այլեւ ըմբոստության ալիքը, որը նրանց ի վերջո վերածում էր խեղճ, կամագուրկ արարածների: Նրանք մտած էին մի կաղապարի մեջ, որ գյուղի ավանդություն էր կրչվում: Դրանից չէին խուսափում հատկապես աղջիկները, որոնց տառապանքի ու կսկծի խորությունն անչափելի է: Եվ այն աղջիկը, ով համարձակվել էր շրջանցել գյուղի բարքերը, դատապարտված էր մահվան. «Ո՛ր աղջիկը մորթեց իր հոգիին մէջ տարփանքին աղաւնին ու օր մը անոր արիւնտու վերադարձը չսպասեց» (էջ 420):

Շարունակությունը՝ էջ 6

ԳԵՆՈՐԳՅԱՆ ԻՈԳԵՆՈՐ ԴԵՆՄԱՐԱՆԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱՆԿՈՒՄԸ

Սկիզբը՝ էջ 3

«Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ տարեցտարի առաջադիմություն ենք տեսնում, տեսնում ենք, որ ճեմարանի հարկի ներքո աճում, հասակ են առնում եւ ձեւավորվում գիտակից երիտասարդներ, ովքեր, հավատքի ապրումն իրենց մեջ կրելով, ծառայանվիրումի բարձր գիտակցությամբ գալիս են իրենց անձն ընծայաբերելու մեր ժողովրդի սպասավորությանը: Եվ գոհունակություն է Հայրապետիս համար հաստատել, որ շնորհիվ մեր Եկեղեցական սպասավորների ջանադիր, նվիրյալ, հավատավոր ծառայության՝ աստիճանաբար վերականգնվում է Հայոց Եկեղեցու վարկը մեր ժողովրդի կյանքում», - ընդգծեց Նորին Սրբությունը:

Հայոց Հոգևորականության ճեմարանականներին ուսումնառության ժամանակաշրջանը լավագույնս օգտագործել. ոչ միայն գիտելիքներ ամբարել, այլեւ աղոթքի մեջ կերտել իրենց գործերը, զորացնել իրենց հավատքի ապրումն ու զգացումը, որպեսզի այդ հավատքի բույրով հագնենա ժողովրդի կյանքը, այդ հավատքով շենանա հայրենիքը, ու պայծառանա Եկեղեցին:

Գարեգին Բ Կաթողիկոսը, խոսելով Եկեղեցականների ծանր ու պատասխանատու կոչման եւ հավատքի կարեւորության մասին, նշեց, որ կրթական հաստատության հարկի ներքո ընտրյալներ են պատրաստվում ծառայության կոչվելու Եկեղեցու առաքելության ասպարեզում:

«Եկեղեցականը պետք է կարողանա ոչ միայն Կենաց Բանի քարոզիչը լինել, ոչ միայն հոգեւոր-բարոյական դաստիարակը լինել, այլ նա պետք է կարողանա հավատքի կերտողը լինել անհատի, անձի հոգում,



որպեսզի այս հավատքը հրաշագործի մարդու էության մեջ, կարողանա կյանքը ապրումի ու գործի վերածել եւ գեղեցիկ իրագործումներով զարդարել մարդկային կյանքը:

Այս հաստատության ներքո հավատքի մարդիկ են, որ պետք է կերտվեն, որովհե-

տեւ, եթե այս հաստատության մեջ ուսում առնող եւ շրջանավարտ դարձող անձը հավատքը չկրի իր մեջ, չի կարող այն սերմանել իրեն վստահված հավատացյալ հոգիներում: Եթե այդ հավատքի կերտումն ու սերմանումը՝ իբրեւ ձեռնհաս, բարի ու նախանձախնդիր հովիվ, չկարողացավ իրագործել, պիտի

մարդկային կյանքում պակասեն այդ հավատքից բխած գործերը, եւ մարդկային կյանքը պիտի օրհնություններից զրկված եւ դժգույն դառնա: Հավատքն է, որ զգեստավորում է կյանքը գեղեցիկ արարումներով, հարստացնում աստվածահաճո գործերով եւ այն դարձնում հաճելի ինչպէս հասարակության յուրաքանչյուր անդամի, այնպէս եւ երկնավոր մեր Տիրոջ համար», - ասաց Հայոց Հայրապետը:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը հայցեց Երկնավորի մշտական օրհնությունը՝ երկրի, հայոց ազգի եւ մասնավորապես Հայոց Եկեղեցու կրթական հաստատության՝ Եկեղեցականների մտքի եւ հոգու դարբնոցի համար: Նորին Սրբությունը նաեւ մարդեց, որ Տերն էր շնորհներն առատորեն հեղի ճեմարանի սաների եւ դասախոսների վրա, որպեսզի հաստատության մեջ դաստիարակվի ժողովրդի ակնկալած սերունդը՝ իր նվիրյալ ծառայությամբ շարունակելու մեր հայրերի փառավոր ուղին:

Ցերեկույթը եզրափակվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով:

Ճեմարանն անցնող տարում ունեցել է 104 ուսանող, հաստատությունում դասավանդել է 71 դասախոս, որոնցից 45-ը՝ աշխարհական, եւ 26-ը՝ հոգեւորական:

2015-2016 ուսումնական տարում ճեմարանն ավարտեց 18 սան:



Սկիզբը՝ թիվ 11

Պատմադրեն ավելի, քան մյուսները, արտացոլել է հայ ժողովրդի կյանքն ու ճակատագիրը՝ ունենալով իր առարկան ու թեման, կառուցվածքը, գեղարվեստական հորինվածքն ու պատկերավորման միջոցները, կյանքի կոչվելու շարժառիթները: Պատմական թեմայով ողբի անցած ուղու մասին ահա թե ինչ է նշում Խաչատրյանը. «Ինչ-

ՆԱԿԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՂԲՐ

**Մովսես Խորենացի, Ներսես Շնորհալի,
Խաչատուր Կեչառեցի, Ստեփանոս Օրբելյան**

պէս այլ տեսակների, այնպէս էլ մասնավորապէս պատմական թեմայով ողբի անցնող ուրիշ կապակցութեամբ կարելի է ասել, որ ամեն մի სოფო სოფოთაგორბოქასი հեղինակ, եթէ նա զուրկ չի եղել գրական որոշ անհատականութիւնից, ունեցել է իր գեղարվեստական մտածողութիւնը, ապա սոսկ չի կրկնել նախորդներին. Հետեւել է նրանց, յուրացրել նրանց ավանդները, բայց եւ դրսեւորել է իրենը. ժամանակի ու միջավայրի պահանջով՝ նրա ընդհանուր զարգացումը, հայացքը, ըմբռնողութիւնը, զգացումն ու ճաշակը հնարավորութիւն են տվել, գրական ձեւին հարազատ մնալով, նաեւ სოფო գծեր ավելացնել նրա վրա, სოფო ե-

րանգներով հարստացել այն: Այդ անվիճելի է: Ճիշտ է եւ այն, որ, այնուամենայնիվ, ողբը գոյության ողջ ընթացքում պահպանել է իր նկարագիրը, որը հաշվի են առել մեր ողբագիրները» (Պողոս Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Եր., 1968, էջ 36):



եղև համարձակ, ընտրվեց ինչպես օրինակ
 համար ինչպես եղանակ Արքայի պարտան.
 Եւստի (Ընտրվեցին) զեղև համար ինչպես
 եղև պարտան պարտան Արքայի պարտան ինչպես.

ան որքերի թեման կազմում են
այան անցքերը՝ ռազմաքաղա-
պականներ, հայկական կյանքի
մեծ իրողություններ, այսինքն՝
և իրականությունը: Եվ ողբա-
բեթ մեծ մասամբ եղել են իրենց
հոգեպերի ժամանակակիցներ:
Ի գրել են իրադարձությունների
սազդեցության տակ:

աս թեմատիկայով ողբի բոլոր ռոմությունների միջով անընդ-
մի գերագույն գաղափար՝
կիրն օտար նվաճողների ձեռ-
նած տննետելու, անկախ ու խա-
լու, հայրենիքի փրկության ու
նպատագրության գաղափարը:
ու ողբի առաջին նշանավոր օրի-
ս 5-րդ դարում տվել է քերթողա-
ս Խորենացին: Վերելում հիշա-
տակված միտքն է առաջնոր-
դել հայրենասեր ողբասացին,
երբ նա ձայնում է. *«Ողբում եմ
քեզ, հայրը աշխարհ, ողբում
եմ քեզ...»* (Մովսես Խորենա-
ցի, Հայոց պատմություն,
Եր., 1961, էջ 350):

Մելջուկյան արշավանք-
ների եւ բյուզանդական
կայսրերի նենգությամբ
11-րդ դարում բնավեր
դարձած Հայաստանի
բնակչության մասին
է գրում Լաստի-
վերցին.

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ էջ 3

Նույն բովանդակությունն ունի եւ մյուս մոլորյալի՝ Կյուրեղ Թոնդրակեցու՝ իբր հայ ազգի ճակատագրով մտահոգվածի՝ արտահայտությունը.

Կույս գալիս էն, կույս էլ գնում:

Կուլյար պիղծ է, երբ չի ծնունդ,

Այն էլ կույսը հայոց ազգի,

Որ կարոտ է կռկող բազկի:

Բայց երբ կուսանոցների մասին համանման միտք է արտահայտում նաեւ սպարապետը, որին նախ եւ առաջ մտահոգում էին ազգի ծնելիությունն ու դրանով պայմանավորված՝ հայոց զորաբանակի համալրումն ու հզորացումը, տարաբնույտ կաթողիկոսը լրջորեն կշռամբում է նրան.

Ի՞նչ է, դու է՞լ թոնդրակացար...

Բանավորճողների հարցադրումների, նրանց հիմնավորում-հերքումների հանդեպ հեղինակային վերաբերմունքը երբեմն բացահայտ է, երբեմն էլ, բարձր արվեստի շնորհիվ, արտաքուստ մուսու է գրեթե աննկատ, քակի որ հեղինակն ինքն առկա է բանավորճող երկու կողմերում էլ՝ շանալով համոզություն հաղորդել նրանց խոսքին՝ երկու կողմերին էլ տալով լիարժեք արտահայտվելու հնարավորություն: Բոլոր դրապիստները մեր առջեւ կանգնում են իրական-պատմական կենդանի անձնավորություններ՝ իրենց մտածողության ու հոգեբանության, նաեւ մարդկային քնավորության անմիջական դրսևորումներով:

Թվում է՝ Սմբատ Չարեհավանցին, Կուն-ծիկ արեղան, Թորակն ու Կրվեռը, Կամարան եւ մյուսները գաղափարական են այնքան, որ երբեք չեն զղջալու եւ խոնարհվելու դատաստանական աղյանի առջեւ, ներում չեն հայցելու, բայց երբ կարողում են դատավճիռը, եւ սպառնալիքը հաստատվում է աղվես-սակերայ խարանները շիկացնելով, ծնրադիր կյանք է արեթսում Կունծիկ արեղան եւ վախից մատնում փարաջաների տակ թրեր թաքցրած ընկերներին։ Միայն Հրաժույշն է դարձ ապրում, մեղեքերը զղջալով թողություն խնդրում եւ արժանանում արքայի եւ կաթոլիկոսի օրհնությամբ։

Բանավորճողներից յուրաքանչյուրն իր մտքի սրությամբ ու մարդկային եղբայրության հարստությամբ երբեմն ուղղակի անմիջականությամբ, երբեմն՝ սարկազմի հասնող հեգնանքով ու խայթող ծաղրով, իսկ թնդրակյան կողմը՝ երբեմն նաեւ գութ շարժելով շղթաներից ազատվելու համար կեղծ համամայնության ու ուղծի խորամանկ խոստովանելով:

Հնդիկական մե՛րթը մուլեգին պետականա-
սեր ու եկեղեցասեր է՝ արքայի, կաթողիկոսի,
սպարապետի պէս, մե՛րթ ահարկու աստվա-
ծուրաց ու եկեղեցամե՛րծ՝ թնդրակցեցիների
պէս: Ե՛վ բանադուրութան ողջ ընթացքում
պատկոճողը երկու կողմերի արտաքին
բուռն բախումները, ինչպէս Նարեկացու

**Թոնդրակյան շարժումը եւ նրա դարագլուխներին
դասադարձող գեղարվեստական համադասերը
Նովի. Շիրազի «Թոնդրակեցիները» լույս տեսավ**

կամ իր իսկ՝ Հովի Շիրազի «Ինքնեզանք համամարդկային» պոեմի քնարական հերոսի պարագայում է, նախ եւ առաջ տեղի են ունենում հեղինակի ներաշխարհում: Թերեւս այս պատճառով է, որ, թվալով այն պահ, ներքին հակադիր ուժերի գալալկերով դարձողական բարդ պատերազմի հորձանուտում հաճախ անմիջապես չի երեւում՝ ո՛ւմ կողմնակիցն է հեղինակն ինքը, թեւ թնդրակյան շարժման ու դրա գաղափարախոսության նկատմամբ նրա խիստ մերժողական, դատապարտող մտաբեղմունքն ակնհայտ է:

Այդ ամենի մեջ, սակայն, հստակ ուրվագծվում է հեղինակի՝ որպես աղանդավորական քայքայիչ շարժումները, մասնավոր թնտրականներին դատապարտողի, հայոց պետականության ամրապնդմամբ, կորցրած հողատարածքների վերադարձով, ազգ-պետություն-էկեղեցի միասնությամբ մտահոգ, հայրենի սրբություններին հավատարիմ հայ մարդու, ազգային ոգու, նկարագրի, հոգեմտավոր ու բարոյական արժեքների նկիրյալ պահպանիչ լուսավոր կերպարը: Նա իր մտածողությունն է դրսևորել սպարապետի, արքայի ու կաթողիկոսի խոսքերում՝ այդպիսով կամենալով ընդգծել, թե նորագույն ժամանակներում իրենց վարքագծով, մարդկային ու բարոյական նկարագրով, քաղաքական հասունությամբ ու ազգային մտածողությամբ ինչպիսին պետք է լինեն պատմական նշանավոր անձնավորությունների թուլությունների ու թերությունները հաղթահարած երկրի քաղաքական ղեկավարը, հոգեւոր և ռազմական առաջնորդները:

Շրթայված թնորակեցիկների բանադրման վճիռը՝ նրանց կախելը կամ ճակատներին աղվեսադորշմ խառանները, իրական է եւ պատմական: Մանավանդ Անիի Մայր տաճարում գեղեցկուհի Կամբարայի մերկանալուը, ծայտայլ զինված Չարեհավանցու եւ մյուսների գաղտնի ոճիրների նորանոր բացահայտումներից հետո այդ վճիռն արդեն կայացած էր: Սակայն բնական մի երեւոյթ՝ Արեւի խավարումը, որ նույնպէս վկայված է պատմագրութեան մէջ, օրը ցերեկով ստեղծում է այնպիսի խառնաշփոթ ու մթնափշէր, որ խաբված ժողովրդին թվում է Աստուծո պատիժը՝ իրենց մեղքերի՝ վանքեր կողոպտելու եւ քանդելու, խաչեր ջարդելու, մյուռնն պղծելու, ընտանեկան եւ ազգային սրբություններ ոտնակոխ անելու դիմաց: Շատ մոլոր յուր շարքի մի Չարեհավանցու եւ մյուսների քարոզներից խաբված՝ կամա թէ ակամա դարձել էին հավատուրաց ոճրագործներ

կամ պերճադիմներ, կատարվածից սարսափած՝ դարձի են գալիս, նորից ընդունում ազգապահի հայրենի հավատը եւ դատապարտում են թնդորակյաններին, իրենց ձեռքով են ուզում տեսնել իրենց երբեմնի կոռւքերի դատաստանը՝ մանավանդ հասնել կեղծ Հիւսուսի թե՛ սեւ, թե՛ կապույտ աչքերը...

Բայց համընդհանուր խառնաշփոթից օգտվելով՝ փախչում են դատապարտյալները, «սուրբ հայրենյաց նուրբ վանդակից» ընկնում «պիղծ օտարի վանդակը»:

Թևոկրակեցիներն իրենց հավատընդդեմ գործողությունները ծավալել էին ոչ միայն հայ եկեղեցիներ, այլև արաբական մզկիթներ քանդելով: Սրա համար էլ նրանք հետապնդվում էին նաև արաբներից: Փախստականները բռնվում են պատռելիս են Դվինի արաբ Մսիրի՝ Աբըլ-Բադրի ձեռքով, եւ յոթն էլ դառնում են «մի գեղեզման»:

Յուրօրինակ է Սմբատ Չարեհավանցու «Էրեսական» մահը. արաբ էմիրը մզկիթը քանդելու եւ մոլլային սպանելու համար մահապատժու է դատաւտանից փախած, պատահաբար իր ձեռքն ընկած «նոր Յիսուսին»՝ ծանակելով ու հեղնելով, թե Յիսուսը թաղվելուց հետո հարություն առավ երրորդ օրը, ինքը նրա հարունթյունը կսպասի երեսուն օր:

Պոեմն ավարտվում է երկմաս «Վերջերգանքով», որը հեղինակի՝ Նոր սերունդներին ուղղված գաղափարական ու գեղագիտական հարցադրումների ընդհանրացված ասվածություն է։ Հայոց պատմության նյութի վրա հյուսված այս պատմափիլիսոփայական պոեմում հովի. Շիրազն իրոք արժանանում է համամարդկային խնդիրներ։ Ահա ինչու «Վերջերգանքի» առաջին մասը փոխաբերական մի պատկեր է, որով հավանք խնդիրը՝ խաչի ու դուրանի բանավեճը, սերկայացնում է աշխարհում սկզբից ու գարնանը հորդացող, անդադար ափերի ժայռերին բախվող, անդնդում գալարվող վառույթի ալիքների հավիտենական ընդգլուսումով։ Իսկ երկրորդ մասում բանասերծի՝ Նարեկացիով թոճված պատգամն է՝ ուղղված նոր սերունդներին։

Անհավատությունն է մարդկության մեծագույն չարիքը: Եղած կամ չեղած Աստված կատարելության բարձունքն է, որին միշտ պիտի ձգտի մարդը, եւ անհիշաբար ու ներդաժմիտ, անաչառ դատավորն է, որի պատժից զգուշանալով՝ մարդը միշտ պիտի մնա խղճի եւ մարդկայնության սահմաններում:

... Ո՛ր մարդ, մի բանի պիտի հավատաս,
Մարդուց վեր բանի, որ աստվածանաս:

Թեկուզ չլինի՝ պիտի հավատաս,
Որ Աստված լինի, որ գեթ մարդ մնաս:
(Թ., էջ 326)

5.

Ավելի քան վեց տասնամյակ առաջ գրված «Թնդողակեցիները» պոեմն ընթերցողին է ներկայացվում նույնքան ուշացումով, սակայն կարծես ոչինչ չի հնացել, եւ այսօր էլ այն արդիական սուր ինչեղություն ունի՝ եւ ոչ միայն արդարադիրական շարժումների մասին պատմական ու գեղարվեստական ճշմարտությունը նոր սերունդներին փոխանցելու իմաստով: Այնտեղ ճշգրիտ են ներկայացված Հայաստանի պատմական աշխարհագրությունը, բոլոր այն տեղավայրերը, որ ծավալվել է թնդողակյան շարժումը, եւ կատարվել են էպիկական գործողությունները: Նրա էջերում պատմականն ու գեղարվեստականը գիտական ճշգրտության հետ հանդես են գալիս միասնաբար: Իսկ շիրազյան չափածո պատումի լեզվի առումով՝ իր արտահայտչական միջոցների հարստությամբ, բառապաշարի ճոխությամբ, հնաբառերով ու բազմաթիվ նորակազմություններով, պատմական դարաշրջանի եւ միջավայրի գունագեղ պատկերավորմամբ, «Անի» եւ «Թնդողակեցիները» պոեմները մրցակից չունեն: Շատ պատմաբառեր ու գործածությունից վաղուց դուրս եկած հնաբառեր, ինչպես՝ «մորուս», «աթաշակ» եւ այլն, ճշտել ենք բառարաններով եւ տողատակում տվել անհրաժեշտ ծանոթագրություններ: Սակայն ավելի շատ են հայերենի ածանցման ու բառաբարդման եղանակներով շիրազյան նորակազմությունները, որոնք նրա պոեմները դարձնում են ավելի ճոխ ու պատկերավոր, գեղարվեստականի հետ միասին դարձնում լեզվական իսկական հարստություն:

Հայ դասական գրականության այս նորահայտ գլուխգործոցի՝ Յովհ. Շիրազի «Թնդորակեցիները» պոեմի հրատարակությունը թերևս լավագույն նվերն է ընթերցողին՝ մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյա հոբելյանի առիթով:

Համոզված եմ, որ այս պատմափիլիսոփայական պոեմը՝ ազգային ու համամարդկային խորքով վիպեղը, իր իմացական-ճանաչողական քննյոթով հանդերձ, ընթերցողին կպարզեի գեղագիտական իսկական բավականություն:

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկզբը՝ էջ 4

Գյուղում հիմնականում հարսանիքների ժամանակ պատմվող մի հին պատմություն բացահայտում է հայ գյուղի ամենասուրբ ավանդույթները: Այն նպատակ ուներ աղջիկներին ետ պահելու «աղջիկ օրերում» գործելիք մեղքից: Ավանդությունը դաժան էր այն հարսների նկատմամբ, որոնք ամուսնական առաքալստ էին մտել՝ «իրենց այտին վրայ օտար բերնի մը կրակովը»: Յեքիաթը պատմում է հարսների, նրանց խեղճած ճակատագրերի մասին, որոնք «Ծոցի-գիշերին» կիսամերկ ու բոքիկ դուրս են արվում ամուսնու տնից ել ինքնասպան լինում՝ «չուանի մը հասակին յանձնելով իրենց մեղքը» (էջ 406): Գյուղի կարծիքով՝ աղջիկը մեղապարտ էր. նա մեղանչել էր գյուղի ամենասուրբ ավանդույթի դեմ ու պետք է կյանքով վճարեր: Բայց Օշականի կարծիքով՝ աղջկա՝ սրբազան ծաղկի նմանվող մեղքն արդարացված էր: Ակնհայտ է, որ Օշականը չի մեղադրում այդ աղջիկներին, այլ գովերգում է ամենակարող սիրո երազը («**Հին պատմություն**», «**Կանանչ-կիրակի**):» («Կանանչ-կիրակի» հեքիաթը ժողովածուի միակ գործն է, որն ուղեկցվում է սիրո եւ բնության մասին ժողովրդական երգերով):

Գյուղը տարբեր աղբյուրների շուրջ տարբեր հեքիաթներ էր հյուսել: Գյուղացին միշտ ինչ-որ մի պատմություն է կապել աղբյուրների հետ: Դրանք եղել են կյանքի եւ մահվան խորհրդանշներ: Աղբյուրը կարող էր ավետաբեր լինել, կարող էր զարհուրելի մահվան խորհուրդ ունենալ: Այդ աղբյուրների մոտ բազում աղջիկներ երգել են իրենց բախտի երգերը («**Աւետում-աղբիւր**», «**Կաղանդի պատմություն**):»

Հայ ընտանիքներում զավակ ունենալն ամենամեծ ուրախությունն էր, այդ իսկ պատճառով էլ աղբյուրը կոչվում էր «Աւետաբեր»: Տեսնում ենք նաեւ «Վիճակին-աղբիւրը»՝ ծաղիկներ փետտելու, բախտ կարդալու, կաթ ու կարագ ուտելու» գեանցող աղջիկների, որոնց ուխտն ավարտվում էր՝ հավաքված ծաղկեփնջերը՝ որպէս նվիրատվություն, ջուրը նետելով («**Աւետում-աղբիւր**):» Աղբյուրների հետ կապված էին բազում տխուր պատմություններ եւ դժբախտ պատահարներ: Նրանց «տիրուհիները» ժողովրդի շրջանում հայտնի էին «ծովի աղջիկ» անունով: Ամեն մի դժբախտություն ուներ որոշակի բացատրություն: Երբ մեկը «տղաբերքի արիւնտ աւակողիւնի մէջ խեղդուէր», ասում էին, որ նա «ցերեկուան ամայի ու չար ժամերուն» տեսել է «ծովի աղջիկ»: Այդ ոգիները ընտրում եւ կորստյան էին

ՀԱՎՈՐ ՕՇԱԿԱՆ. ԳՅՈՒՂԻ ՀԵՔԻԱԹԸ



մատնում ամենագեղեցիկ աղջիկներին: Օշականը նրանց համեմատում է օտար հողում աճող ծաղիկների հետ, որոնք թառամում են շատ շուտ՝ սպառնալով իրենց գեղեցկությունը, խաբվելով աղբյուրից բարձրացող հարսի քողով ու ոսկիներով զարդարված մեկ այլ աղվորից:

Մարդիկ հավատում էին, որ աղջիկները խաբվում էին տարբեր ոգիներից, որոնք այցելում էին հատկապես «Ծնունդի գիշերին»: Այդ ոգիներն անտարբեր չէին կարողանում անցնել նորահարս ունեցող տների կողքով: Այն տները, որոնք պաշտպանված էին ձիթենու ճյուղով կամ փայտե խաչով, կարծես մնում էին անվնաս: Սակայն, այնուամենայնիվ, ոգիները ծանոթ մարդու ձայնով կանչում էին հարսներին ու տառնում մահվան գիրկը:

Օշականի մանուկ օրերի տպավորություններից անբաժան են Կաղանդի տոնը, նրա հետ կապված ավանդույթները, որոնց անդրադարձը կա Օշականի գրեթե բոլոր շարքերում: Յեքիաթներում («**Կաղանդի պատմություն**», «**Կաղանդի հեքիաթ**», «**Կաղանդ գիշերով**») նույնպես մեկնաբանվում է մանուկների այնքան սիրված ու սպասված տոնը: Մեր կարծիքով՝ նշվածներից առանձնանում է «**Կաղանդի հեքիաթ**» վերնագիրը կրող երկը, որտեղ ընթերցողը, ավանդույթներից զատ, հաղորդակից է լինում գյուղի մանուկների հոգեբանությանը, տեսնում գյուղի գետնափոր տները, Օշականի բառերով ասած՝ «հողը մեծ սենեակ մը», գերանով ծածկված առաստաղից կախված սերկելիլի եւ

խնձորի չորացրած շարանները, ամբողջ մարմնով զգում անգուր ծմռան սառնությունը: Տարիների հեռվից Օշականն անբացատրելի քաղցրությամբ է հիշում Նոր տարվա գիշերները, երբ կույր հորաքույրն արգելում էր իրենց «պիլիթի ու պաստեղ» ուտել, մինչեւ հայրը «խաչ ու աղոթք ընելու, հոգու դրում ուտելու» համար «մեռել-տնից» չվերադառնար: Երեխաներին զսպելու համար սկսվում էին հորքուրի՝ բարու եւ աշխատասիրության մասին պատմվող հեքիաթները, որոնք ամեն տարի պատմվում էին մեկ այլ ձեռով՝ կարծես նույն հեքիաթի փոփոխությամբ շեշտելով անցնող տարին, փոփոխվող կյանքը: Ու հեքիաթը խառնվում էր իրականությանը, արթնացնում մանուկների երեանկայությունը:

Սովորաբար հեքիաթներն ունենում են խրատական բնույթ: Թեպետ Օշականն իր «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» աշխատության մէջ գրում է, թէ ինքը փորձել է գերծ մնալ ընթերցողին խորհուրդներ ու խրատներ պարտադրելուց, այնուամենայնիվ «խորհուրդներու մեհեանը» ունի բազում այդպիսի հատվածներ:

Ինչպես իր պատմվածքներում, Օշականն իր հեքիաթներում էլ մնաց հայի հետ, իր ցեղի ու նրա կրած տառապանքների հետ: Նրանցում արտահայտված են հայ մարդու ոչ միայն տառապանքները, այլեւ ցանկությունները, երազանքները: Օշականը պատմական անդրադարձ է կատարում եւ գնահատում պատմության ընթացքը: Գրողին հուզում է հայ ժողովրդի քաղաքական բախտի խն

դիրը: Նրա կարծիքով՝ հայ ժողովուրդը համակերպվել էր իր բախտի հետ՝ անտեսելով վաղուց հաստատված մի ճշմարտություն. ազատությունը տրվում է պայքարի ու արյան գնով: Հայ ժողովրդի գլխին կախված վտանգների պատճառն Օշականը համարում է անտարբերությունը, անիրավությունը, միասնական պայքարի բացակայությունը: «**Ինչու՞ կը մեռնիք**» հեքիաթում գրողը հետեւյալ միտքն է արտահայտում. «Ու տակաւին Աստուած չի գիտեր, թէ ի՞նչ մարդը կը մեռնի, ազգեր սուրբ կ'անցուին, մանուկները ողջ-ողջ կը թաղուին, ու կիներու արգանդէն կենսաւորուող միսերը դասակներու ծայրը կը գամեն» (էջ 354): Օշականի կարծիքով՝ մեր անտարբերությունից էլ ծնվում է Աստծո անտարբերությունը: Մեզ բաժին էր ընկել այս ճակատագիրը, «որովհետեւ այնքան կը զբաղիք մենք մեզմով» (նույն տեղում):

Օշականը պարզորոշ լսեց «ցեղին սրտի» բաբախը, հասկացավ նրա ցավը ու նաեւ այն, թէ ինչը կապրեցնի ֆիզիկական բնաշնչման վտանգի մեջ գտնվող իր ժողովրդին: «**Կաղանդ գիշերով**» հեքիաթը պատմում է այն Աստծո մասին, որին բաժին էր ընկել տառապած ցեղի «մեռելները հովվելու» անսխառնակ ցավը: Եվ մեր ցեղն էլ դարեր շարունակ կամեցել է այդ Աստծո մէջ տեսնել «ցեղին չմեռնող հոգին»: Այսպես են կամեցել «մեր ցեղէն անոնք, որոնց նայածքը լեռներէն ի վեր քալել է սիրած» (էջ 381): Եվ Օշականն էլ, որը մեկն էր այն հայրենասերներից, ովքեր ուզում էին ցեղի չմեռնող հոգին տեսնել, հասկացավ, որ ազգին պահողը նրա արթուն երազն է: Նույն ավանդությունը պատմում է, որ Աստծո աչքի առջեւ ամեն Կաղանդի գիշեր երեւում են մեր երկրի բոլոր անկյունները եւ պայքարն այն մարդկանց դեմ, ովքեր ցանկացել են սպանել մեր երազը: Եվ ամեն տարի՝ Կաղանդ գիշերով, հայ մեռելները վերակենդանանում են, այցելում իրենց տները եւ նորից ճանապարհվում դեպի սրբազան լեռը՝ լսելու այնքան շատ սպասված խաղաղության ավետիւրը: Հիրավի, կարող ենք ասել, որ սա տառապած ժողովրդի տառապած զավակի երազն է՝ տեսնել իր հնամենի ժողովրդի ազատ ու խաղաղ երկինքը: Պարզ է, որ սա նաեւ երկար տարիներ խաղաղություն եւ ազատություն երազող ժո

ղովրդի ցանկությունն է, «անպարագիր գերեզմանատուն» համարվող երկրի զավակների արդար ցանկությունը: Յեքիաթի՝ «Կու գան մեռելները» մի քանի անգամ կրկնվող տողն ավելի է սաստկացնում այդ երազանքն ի կատար ածված տեսնելու ցանկությունը: Ու ամեն անգամ՝ Կաղանդ գիշերով, մեռելները վերադառնում են իրենց գերեզմանները՝ «կանխահաս ու անբացատրելի հաւատքով արթեցած»:

Օշականի «խորհուրդներու մեհեանը» ժողովածուն տարբեր մտքերի, տեսակետների, հարցադրումների տեղիք կարող է տալ: Գրականագետ Վ. Գաբրիելյանը գտնում է. «Այդ պատմվածքները, գյուղի մարդկանց մասին հեքիաթային, բանահյուսական պատմությունները բնաշխարհի բնարական պատկերներն էին, որ հավաքվեցին «Խոնարհները» (1921) եւ «Խորհուրդներու մեհեանը» (1922) ժողովածուներում» (*Վազգէն Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 54*): Իսկ Կիմ Աղաբեկյանը գրում է. «Օշականը պատրասեւ է ստեղծում, թէ ինքը հետադարձ հայացքով վերապատմում է մանկութ օրերին լսած հեքիաթները: Թվում է նաեւ, թէ հեքիաթների միջից ստեղծում է իր հեքիաթները: Մինչդեռ իրականում նա ուղեգծում է իր հոգեխառնության կազմավորման ընթացքը» (*Կիմ Աղաբեկյան, Հակոբ Օշական, Եր., 2006, էջ 72*): Ի վերջո ո՞րն է գրողի նպատակը՝ վերապատմել մանուկ օրերի իր լսած գրույցները, գրել իր խոհերի մասին, գնահատել գյուղի կյանքը, թե՞... Մի բան վստահ կարող ենք ասել, որ գրողի գլխավոր նպատակն իր գյուղի համապատկեր, բարքերն ու սովորույթները, գյուղի մարդկանց հոգեկան ներաշխարհի բացահայտելն է: Մի խոսքով՝ հայրենի գյուղի ու հայրենի տան հիշատակները վառ պահելը:

Թեպետ Օշականի «խորհուրդներու մեհեանը» ժողովածուում երբեմն կան իրարաբեր մտքեր, գովածքների այլուժեն միագիծ չէ, պատումը երբեմն խրթին է, ինչը դժվարացնում է հիմնական ասելիքի տարբերակումը, այնուամենայնիվ դրանք հայ գյուղի տոներն, բարքերի ու սովորույթների մասին պատմող իրաշալի երկեր են: Եվ ուսումնասիրելով Հ. Օշականի «խորհուրդներու մեհեանը» ժողովածուն, նրա առանձնահատկությունները՝ կարող ենք ասել, որ գրողի «հեքիաթների» աղբյուրը միայն բանահյուսությունը (ավանդազրույցները) չէ, այլեւ՝ ժողովրդի պատմությունը, իրական կյանքը:

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՄ ԿՅՎՆՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկզբը՝ էջ 4

Մայրս դատարկ դույլը դուրս հանեց եւ ջրհորի բերանի մոտ կանգնած՝ սկսեց ինձ սրտապնդող խոսքեր ասել:

Ջրհորը մուր էր ու ցուրտ:

Զգիտեմ՝ քանի ժամ էի մնացել ջրհորում, երբ մեկ էլ ականջս ընկավ մորս հեռու-հեռավոր ձայնը.

- Մարո՛, Մարո՛, քնա՞ծ ես, արթնացի՛ր, ես այստեղ եմ, չվախենաս:

Ես ոչ թե քնից, այլ կարծես երագից արթնացա եւ արձագանքեցի մորս կանչին ու լաց եղա: Մայրս դույլն իջեցրեց եւ ինձ դուրս հանեց ջրհորից: Այնուհետեւ ես եւ իմ հասակակիցներն այլեւս արեւի երես չտեսանք, մոռացանք մեր ուրախ խաղն ու մանկությունը եւ ասպեցիկնք ջրհորներում, սառը թոնիրներում, դարմանով լի պարկերում եւ մեր մայրերի հագուստների քղանցքների ծալքերում:

Մի անգամ, մորս հետ փողոցով անցնելիս, նրա ծալքավոր ու լայն շորի տակից իմ բացած անցքերից

նկատեցի փորն ուռած մի կնոջ, որին շրջապատեցին երեք երիտասարդ քրդեր եւ սկսեցին հրմշտել, քաշքշել: Կինը դիմադրեց, քուրդը խանչալը դուրս քաշեց պատյանից եւ կնոջ վրա հարձակվեց, պատռեց նրա փորը եւ երեխային հանելով՝ խանչալի ծայրին բռնած հեռուց ու մի կողմ շարժեց, ապա բարձրաձայն ծիծաղելով՝ ընկերներով գնացին:

Մի այլ օր մորս շորի տակից նկատեցի փողոցի մեջտեղում մի քանի խաչածե ցցեր եւ վրան մի քանի մանկահասակ աղջիկներ՝ ձեռքները կախ գցած...

Մորս հետ շարունակեցինք մեր ճանապարհը: Մի դարմանանոցի լսեցի աղիողորմ լացի եւ խոր տխրոցի ձայներ, ինձնից անկախ՝ լսվող ձայնի կողմը նայեցի: Ռ՛վ գարմանք, մի քանի աղջիկ մինչեւ ծնունդը թաղված էին դարմանի մեջ, եւ յուրաքանչյուրի մոտ խանչալը ձեռքին մի քուրդ էր կանգնած: Քիչ այն կողմ մի այլ քուրդ քաշքշում էր քաշել մի կնոջ, կինը բղավում եւ դիմադրում



եր... Քուրդը քացով խփեց եւ գետնին տապալեց խեղճ ու անօգնական կնոջը: Մայրս, այդ բոլորը տեսնելով, ասաց.

- Մարո՛, բալի՛կս, ձայն ու ծպտուն չհանես, թե չէ քեզ էլ կբռնեն ու դարմանի մեջը կթաղեն:

Այդ ծանր տպավորություններով տուն մտանք, մայրս մկրատ վերցրեց եւ կտրեց իր այնքան խնամած ու փայփայած իմ երկար ու հաստ խիտ մազերը. երեսիս ցեխ ու մուր քսեց, շորերս բազմաթիվ տեղերով պատռոտեց եւ ցնցոտիանման դարձրեց. այդ տեսքով ես նման էի

անապատում մի մուրացկանի:

Մի օր գյուղ մտավ ոտքից գլուխ գինկած 12 թուրք: Ալան-թալանից հետո գյուղի բոլոր կանանց մի տեղ հավաքեցին եւ սկսեցին տանջող «մարմամարզությունը»: Կանանց դեմ ու դեմ կանգնելով՝ նրանցից մեկը սկսեց.

- Կանգնե՛լ, նստե՛լ, մեջքի պառկե՛լ, կողքի պառկե՛լ:

Ապա հարձակվեցին, կապոտեցին երիտասարդ կանանց ու աղջիկների ձեռքերն ու ոտքերը, իրար վրա գցեցին, իրացանի կոթերով մի լավ ծեծեցին, ապա ձիերին կապե-

լով՝ անհայտ ուղղությամբ տարան: Երեւի ընթերցողն ինձ հարց կտա, թե ինչու քրդերը հատկապես 6-10 տարեկան աղջիկներին էին տանում: Հետագա տարիներին ես էլ այդ հարցը տվի իմ հայրենակիցներին ու հարազատներին եւ նրանցից իմացա, որ քրդերի կենցաղում աղջկա ամուսնական շրջանը համարվում է 6-10 տարեկանը. դրանից բարձր տարիք ունեցողների հետ ոչ ոք չի ամուսնանում:

Ամառ էր՝ հուլիս-օգոստոս ամիսները: Ցորենի ոսկեգույն արտերը հասել, եւ հասկերը քամու մեղմ սոսափի ներքո օրորում էին իրենց ծանրացած գլուխները: Առավոտյան՝ մութթույլսին, մայրս ու մի քանի կանայք արտը գնացին, մի քանի խուրձ ցորեն բերեցին, ծեծեցին, թեփահան արեցին, երկաթեղով աղացին, այլուր դարձրին, խմոր հուցեցին, կլոր-կլոր բաղարջներ թխեցին եւ խուրջիներում դարսեցին եւ ճամփա ընկան դեպի Արծկե:


Նրանց խոսակցություններից ես հասկացա, որ նրանք թողնում են գյուղը, բարեբեր հողերը, տունն ու տեղը, հարազատ ծնողավայրի օդն ու ջուրը, միայն թե ազատվեն թուրքերի եւ քրդերի նվաստացնող հալածանքներից, նրանց տված ամենօրյա տանջանքներից: Ծարունակելի

ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 11

Գր. Արծրունին Շվեյցարիայում եղել էր նաեւ ուսանողական տարիներին՝ մոտ 20 տարի առաջ, եւ լրացուցիչ հնարավորություն էր ստանում կատարված փոփոխությունները նկատելու եւ արձանագրելու: Պատմական որեւէ իրադարձություն չկա այս երկրում, սակայն այն հետաքրքիր է առաջին հերթին նրանով, որ Արծրունին շարունակում է ընթերցողին ու լայն հասարակությանն առաջարկել խնդիրների լուծման իր բանալիները՝ այս անգամ դա անելով տարաբնույթ համեմատությունների ու պատկերավոր օրինակների միջոցով:

Նախ Արծրունին, հավատարիմ մնալով հուշագրության ավանդական գրելաոճին, ընթերցողին պարզաբանում է, որ ընդամենը ցանկություն ունի հաղորդել իր տպավորությունները՝ բնավ նպատակ չունենալով գիտական, ծրագրային ինչ-որ նյութ մատուցել: Չնայած սրան՝ ստիպված ենք կրկնել, որ հրապարակախոսն անուղղակիորեն ամեն ինչ անցկացնում է իր ծրագրային մանրադետալով: «Շվեյցարիայի մասին իմ հոգվածների շարքում ես դիտավորություն չունեմ մի ուսումնական հետազոտություն կամ գեկուցում ներկայացնել, այլ կաշխատեմ հաղորդել հայ ընթերցողիս ճանապարհորդի, տուրիստի թեթեւ, միմյանց հետ գուցե սերտ կապ չունեցող նկատողություններ, կաշխատեմ հաղորդել իմ տպավորությունները, իմ դիտողությունները, իմ տեսածն ու լսածը» (1886, հ. 2: Այս հուշագրությունից մյուս մեջբերումների դեպքում կնշվի միայն լրագրի



համարը): Արծրունին բարի նախանձով արձանագրում է 20 տարի առաջ իր տեսածի եւ ներկայի դրական տեղաշարժերը, որոնք, նրա համոզմամբ, նախ եւ առաջ արդյունք են քաղաքակիրթ մարդու նպատակալաց աշխատանքի: Արծրունին խոսում է Շվեյցարիայի բազմազգ բնակչության մասին, այնտեղ ուսանող երիտասարդների ու նրանց դրսևորած վարքագծի մասին: Նա հատկապես ոգեւորված խոսում է Շվեյցարիայի տարրական, միջնա-

կարգ ու բարձրագույն դպրոցների մասին՝ իրավացիորեն շեշտելով պետական ճիշտ ու անհրաժեշտ քաղաքականությունն այդ ուղղությամբ: «Մշակի» էջերում Արծրունին բազմիցս խոսել էր դպրոցների ու համալսարանների մասին, եւ սա դառնում է լրացուցիչ խթան՝ ներկայացնելու նաեւ իր համակրած դպրոցի տեսակները: Ավելացնենք, որ Արծրունին այնքան է հմայված շվեյցարացիների ազնվությամբ, նրանց

բարձր գիտակցությամբ, որ ընկնում է մեկ այլ ծայրահեղության մեջ՝ նրանց բնավորությունը տարածելով նաեւ իրենց ընտանի կենդանիների վրա: Այս դեպքում էլ Արծրունու կատարած համեմատությունը հայերիս օգտին չէ. «Մեր երկրի վայրենի հովիվների շները, ապրելով վայրենի շրջանի մեջ, իրանք էլ վայրենի, չար ու կատաղի են: Շվեյցարիայում ոտքով շրջելով նույնիսկ հետ ընկած գյուղերում՝ ես չհանդիպեցի չար եւ անցողիկների վրա հարձակվող շների» (հ. 25): Արծրունին լրիվ ընկնում է ծայրահեղության մեջ, երբ այդ շներին էլ վերագրում է բարձր հասարակական գիտակցությունը: «Դուք տեսնում եք մի ահագին շուն, որ մի գյուղական խրճիթի շեմքի առջեւ հանգիստ պառկած է. նա չի հաչում, չի հարձակվում ձեզ վրա, նա երեւի հասկանում է, որ ինչ անցնող էլ լինի, նա ազնիվ մարդ է եւ որեւէ չար դիտավորություններ չունի» (հ. 25):

Կնոջ աշխատանքի, նրա հասարակական դերի բարձրացման հարցն Արծրունու հուզում էր նույնիսկ նախամշակյան շրջանից: Բազմաթիվ հոգվածներից ու առաջնորդողներից բացի՝ նա տպագրեց նաեւ «Երագ» պատկեր-պատմվածքը: Եվ ահա Շվեյցարիայում կնոջ ունեցած բարձր դերը կրկին Արծրունու հիշեցնում է իր ծրագրերի մասին, եւ նա սկսում է մեկ առ մեկ թվարկել այն բոլոր պաշտոնները, որ զբաղեցնում են կանայք Շվեյցարիայում՝ հաջողությամբ կատարելով իրենց վերապահված առաքելությունը: Ըստ Արծրունու՝ տղամարդու հետ հավասար կատա-

րելով բոլոր աշխատանքները՝ կինը, այնուամենայնիվ, կարողացել է նաեւ պահպանել իր ողջ կանացիությունը, հմայքն ու մայրական զգացմունքները: Սա Արծրունու համար լավ առիթ է՝ համոզելու, որ ոչ մի աշխատանք չի կարող կնոջը զրկել իր հմայքից, եւ պետք չէ կնոջը հեռու պահել հասարակական աշխատանքներից: Շվեյցարացի կնոջ օրինակով նա վստահ պնդում էր, որ կինը կարող է եւ միաժամանակ լավ պաշտոն վարել, եւ լինել լավ մայր ու սիրող կին: Շվեյցարացի կինն օժտված է նաեւ բարձր գիտակցությամբ, ինքնուրույն որոշում կայացնելու կարողությամբ: Արծրունու համար այս ամենը խիստ ընդունելի են, եւ նա դրվատանքով է խոսում նաեւ այդ երկրի իրավական ակտերի մասին, որոնք կնոջը լիակատար ազատության հնարավորություն են տալիս:

Արծրունին մեծ հիացմունքով է խոսում նաեւ Շվեյցարիայի բնակիչների ակտիվ քաղաքացիական գիտակցության մասին: Նա զարմանում է, որ այդ երկրում ամեն ոք ստորադասում է անձնականը ընդհանուրին, համայնականին՝ այդ ամենի սկիզբը տեսնելով նրանց երկրի քաղաքական նշանաբանի մեջ. «Ամենքը՝ յուրաքանչյուրի համար, եւ յուրաքանչյուրը՝ ամենքի համար»: Արծրունին այս մասին առավել երկար ու մանրամասն է խոսում՝ սեփական երկրի ընթերցողին հավատացնելու, որ ամեն հարցում հարկավոր է առաջնորդվել ընդհանուր, համայնական շահով ու մտածողությամբ:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 5

... ազգ օտարածնաց
Օտարացուցին զմեզ ի բնակութենէ մերմէ...

(Արիստակես Լաստիվերցի, Պատմութիւն, Եր., 1963, էջ 21):

Հայրենի ժողովրդի գերվելու, ստրկացվելու վերաբերյալ նույնպիսի մտածումներով լի են նաեւ մյուս ողբագիրների երկերը: 13-րդ դարի վերջերին, երբ հայությունը կեղեքվում էր մոնղոլական ծանր լծից, հաջատուր Կեչառեցիին սրտի ամենախոր ցավով էր նկատում հայ իշխանական տների անկումը.

Մեռան իշխանքըն մեր ցանկալի
'Ի իւրանց որդիքն ի տղայ հասակի,
Սուզըն տիրեաց մեզ Իսրայէլի...
Մեւ ըզգաւառու ի յերթմանի...
...Մակար չէաք ծընեալ յաշխարհի,
Մեք գերեցաք՝ ու խիստ արժանի,
Մեր գերեդարձքըն չեն ի միջի:

(Մայիս Ավդալբեկյան, Խաչատուր Կեչառեցի, Երեւան, 1958, էջ 131):

Հետագա մեջբերումներն այստեղից են: Իսկ Կեչառեցու, ինչպես եւ մեր մյուս ողբագիրների միակ բաղձանքը հայկական անկախ պետականության վերականգնումն էր.

Փըրկել ըզմեզ յազգէն Հագարի,
Չթաղ ու զաթող մեր Հայոց ազգի...
(Նույն տեղում):

Եվ իրականության ու երազանքի բախումից էլ հենց ծնվում է պատմահայրենասիրական ողբը, որի մեջ, գեղագիտական մյուս հատկանիշներից ու ըմբռնումներից ավելի, արտահայտություն է գտել ողբերգականը: Ոչ միայն սեր դեպի հայրենիքը, ոչ միայն պարզապես հայրենասիրություն, այլ նաեւ դժգոհություն իրականությանից, անբավականությունն եղածի հանդեպ, լավի ձգտում, երազանքով

Նայրենասիրական ողբը

ու ցանկությամբ տոգորված հայրենասիրություն: Այսպիսով պարզ է դառնում, որ կյանքի եղերական իրադարձությունները, ողբերգականը հեղինակներին չեն մղում անծայր հուսահատության: Որքան էլ նրանք համակվում են մռայլ տրամադրություններով, թախծոտ խորհրդածություններով, այնուամենայնիվ, նրանք փայփայում են հույսի մի թել. այն է՝ վերջնական հաղթության, փյունիկի պես հառնելու գաղափարը: Այսինքն՝ մռայլ ողբերգությունից ողբագիրները գնացել են դեպի լույս, դեպի լավատեսություն:

Պատմահայրենասիրական ողբերում բանաստեղծը խոսում է հայրենի ժողովրդի անունից, թվում է ընդհանուրի մեղքերը, եւ թեեւ ի վերջո դրանք համարում է պատկերվող ողբերգության սկզբնապատճառ, բայց անմիջական պատճառ դիտում է թշնամուն եւ նրա չարագործությունների դիմաց Աստծուց հատուցում է ակնկալում:

Պատմաողբերում պատումն այլ կերպարանք է ստանում, երբ դրանք հորինվում են բարառնական եղանակով, ինչպես Ներսես Շնորհալու, Ստեփանոս Օրբելյանի եւ այլոց երկերը: Դիմառնաբար առնված նրանց հերոսներն ինքնին գեղարվեստական ընդհանրացումներ են եւ անձնավորում են ոչ թե որեւէ անհատի, այլ մի ողջ քաղաք, երկիր, ժողովուրդ: Նրանց «ես»-ի մեջ բեկված է հայրենիքը, արձարծված է նրա բախտը: Ժողովրդին եւ հայրենի աշխարհը ներկայացնող այդ անձնավորված հերոսների մերկացումների, բուռն զայրույթի ու անեծքի գլխավոր առարկան թշնամին է, իսկ երա-

զանքը՝ այս աշխարհում տանջվածների ազատագրումը, նրանց տառապանքների վերացումը, ինչպես նաեւ՝ հոգու փրկությունը: Օրինակ՝ Շնորհալու ողբի հերոսը համոզված է, որ գրավված Եդեսիայի բնակչությունն արձակվելու է գերության կալանքներից, եւ նրա փոխարեն սուր ու զնդանի է մատնվելու թշնամին: Ահա թե ինչ տողերով է եզրափակում Շնորհալին իր պոեմը.

'Ի ես համբառնամ զաչս ի բարձանց,
զբեզ տեսանեմ շուրջ ժողոված,
Ընդ որ խնդամ եւ ցնծացած՝
գիրկս արկանեմ եւ զվարճուացած,
եւ գտիրական գգեստ մերկացած՝
կարմիր կանաչ գոյն գգեցայց...

(Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, էջ 132): Այսպիսով՝ պարզ է, թե պատմական-հայրենասիրական ողբերի հիմքում կյանքի ինչպիսի երեւույթներ եւ իրողություններ են ընկած, որն է հեղինակի ողբերգության աղբյուրը:

Այժմ համառոտ անդրադառնանք պատմական-հայրենասիրական ողբի կառուցվածքին: Առաջին բաժինը մուտքն է, ուր բանաստեղծը կամ դիմառնաբար առնված նրա հերոսը դիմում են ունկնդիրներին եւ հրավիրում ողբակցության: Սա ողբի բուն նյութին անցնելու նախապատրաստական մասն է, որը Շնորհալու, Ստեփանոս Օրբելյանի, Գրիգոր Տղայի երկերում բավականին ծավալուն է: Ապա սրան հետեւում է հիմնական մասը՝ պատմությունը: Այստեղ գրեթե միշտ հիշատակվում է նկարագրվելիք անցքի ժամանակը: Եթե մուտքը հիմնականում քնարական բնավորություն է ունենում, ապա այստեղ գերիշխողը պատ-

մողական տարրն է՝ քնարականի զուգակցումով: Այդ առումով պատմաողբերը ժամանակակից գրական տեսակներից ամենից ավելի մոտ են պոեմին: Պատմաողբի լավագույն ստեղծագործություններում սյուժեն ողբասացի կամ հերոսի ներաշխարհի արտահայտությունն է: Օրինակ՝ «Ողբ Եդեսիոյ»-ում այն ծառայում է «որդեկորույս, որը եւ այդի» մոր կերպարի բացահայտմանը, կերպար, որի գեղարվեստական մտահղացման գաղափարը Շնորհալու պարագայում ծնվել է ժողովրդական մահենքի երգերի կատարման, գուցե երեմիայի ողբի անմիջական նմանությամբ: Բայց, ի տարբերություն Երեմիայի, Շնորհալու երկում անձանկորված Եդեսիան դիմառնական կերպար է՝ ապրող, գործող, մտածող, երեսպայող, հուշեր ու բաղձանքներ ունեցող մարդ:

Պատմաողբում պատումին հետեւում է երրորդ եւ վերջին հատվածը, որտեղ տրվում է թշնամու գնահատությունը՝ ունկնդիրների եւ ընթերցողների մեջ նրա նկատմամբ ատելությունն առաջացնելու նպատակով: Միեւնույն ժամանակ երեւան են գալիս նաեւ գրողի լավատեսությունը, վերածնության գաղափարը: Այս հատվածը նաեւ հիշատակարանային բնույթ է կրում, ինչպես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանի գործում:

Ընդհանուր կերպով խոսելով պատմաողբի ժանրային առանձնահատկությունների մասին՝ անդրադառնանք միջնադարյան գրականության պատմահայրենասիրական ողբերից մի քանիսին՝ հատկապես Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու, Խաչատուր Կեչառեցու եւ Ստեփանոս Օրբելյանի երկերին:

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ



Գեորգեան հոգևոր ճեմարան



Վաչէ և Թամար Մանուկեան Մատենադարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԴՐԱՆ

Հայերեն Սուրբ Գրքի թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովոյթում

Գիտաժողով Մայր Աթոռ Սբ Էջմիածնում
հոկտեմբերի 6-8, 2016 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգևոր ճեմարան
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարան
Էլ. հասցե. holybible350@gmail.com
Հեռ. +37410 517180/182

2016 թ. լրանում է հայերեն Աստուածաշնչի առաջին տպագրության 350-ամեակը: Այս առթիւ Մայր Աթոռ Սբ Էջմիածինը կազմակերպում է մի շարք միջոցառումներ՝ նպատակ ունենալով վերաթելորելու Ոսկան Երեւանցու իրականացրած Սբ Գրքի հրատարակության՝ մեծապէս կարեւոր իրադարձությունը:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ Գեորգեան հոգևոր ճեմարանն ու Ս. Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» մատենադարանը համատեղ նախաձեռնել են «Հայերեն Սուրբ Գրքի թարգմանությունն ու հրատարակությունը պատմության հոլովոյթում» գիտաժողովը: Գիտաժողովի շրջանակներում անդրադարձ կկատարուի մի շարք կարեւոր եւ արդիական թեմաների, որոնք ամփոփուած կը լինեն հետեւեալ երեք բաժիններում՝

1. Աստուածաշնչի հայերեն թարգմանության բնագրային վերլուծություն:

Այս բաժնում հիմնականում առաջարկում է անդրադարձ կատարել հայերեն թարգմանության տարընթերցումներին եւ իւրայատկություններին՝ համեմատութեամբ եբրայերեն, յունարեն, ասորերեն, լատիներեն եւ այլ բնագրերի, ինչպէս նաեւ՝ բնագրային հաւելումներին կամ կրճատումներին:

2. Աստուածաշնչի հայերեն թարգմանության պատմական վերլուծություն:

Այստեղ ցանկալի է, որ հեղինակներն անդրադառնան Սբ Գրքի հայերեն թարգմանությանն առնչուած պատմական զարգացումներին, Աստուածաշնչի կանոնին, ճաշակներին եւ հրատարակություններին:

3. Աստուածաշնչի աստուածաբանական վերլուծություն:

Առաջարկում է աստուածաբանական տեսանկյունից ուսումնասիրել Հին եւ Նոր Կտակարանները՝ յատուկ յղում կատարելով հայերեն բնագրին: Թեմաները կարող են ընդգրկել ինչպէս Աստուածաշնչի գրքերի ամբողջական բաժինների, այնպէս էլ առանձին գրքերի կամ տեղիների վերլուծություններ:

Խնդրում ենք զեկոյցների թեմաների առաջարկություններ ներկայացնել Գեորգեան հոգևոր ճեմարան մինչեւ 2016 թուականի օգոստոսի 31-ը: Տեղեկացնում ենք, որ գիտաժողովի զեկոյցներն ի մի են բերուելու եւ հրատարակուելու Սբ Գրքի հայերեն առաջին տպագրության 350-ամեակին նուիրուած առանձին հատորով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅՏ

Մասնակցութեան յայտը խնդրում է ուղարկել մինչեւ 2016 թուականի օգոստոսի 31-ը՝ հետեւեալ հասցեով.
holybible350@gmail.com

Անուն, ազգանուն

Կազմակերպություն

Պաշտոն

Երկիր, քաղաք

Հեռախօս (նշելով երկրի կոդը)

Էլ. Փոստ

ՅՈՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՉԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ

Նշուած թեմատիկ ուղղություններից որում կցանկանաք ելոյթ ունենալ (ընդգծել նախընտրելին)

1. Աստուածաշնչի հայերեն թարգմանության բնագրային վերլուծություն:
2. Աստուածաշնչի հայերեն թարգմանության պատմական վերլուծություն:
3. Աստուածաշնչի աստուածաբանական վերլուծություն:
4. Չեկոյցի վերնագիրը:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՀՈՒՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 7

Ընդարձակելով ասելիքը՝ հեղինակը որպէս օրինակներ է մատնանշում տարատեսակ հանգանակությունները, որոնց հասարակությունը մասնակցում է սիրահոծար: Մինչդեռ, ինչպէս ինքն է բնորոշում, մեզանում բարեգործական հանգանակության անուն լսելիս՝ մարդիկ փախչում են, իսկ Շվեյցարիայում մարդիկ իրենք են նախաձեռնություն ցուցաբերում: Բնականաբար, Արծրունին պիտի մինչեւ «վերջ գնա» եւ ցույց տա նաեւ բարեգործության շնորհիվ արձանագրված խիստ դրական արդյունքները: Նա պատմում է «Յուրիխի որդեգրուիւ» մասին (սոցիալապէս անապահով որբ աղջիկը հասարակության հանգանակած միջոցներով ուսանելու է մեկնել արտասահման եւ դարձել աշխարհահռչակ երգչուհի) եւ անմիջապէս հակադրում հայերի օրինակը, թէ ինչու մենք երբեք ձեռք չենք մեկնում իրար, արտասահմանում իրար չենք սատարում: Մնում է ավելացնել, որ այս պատմությունը մեզ հիշեցնում է գրեթէ նույն շրջանի հայ կյանքի պատկեր ներկայացնող Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի հերոսին, ով նույն հասարակության «մարդասիրական» ջանքերով ոչ միայն չի բարձրանում, այլեւ կորցնում է նախկինում ունեցածը:

1889-ի ամռանը Փարիզում գուժարկում է գրողների միջազգա-



յին կոնգրեսը, որին մասնակցում է նաեւ Արծրունին՝ ներկայացնելով հայոց գրականության վիճակը: Փարիզյան տպավորությունները լույս են տեսնում նույն թվականին «Մշակի» էջերում (հ. 69-ից մինչեւ հ. 85-ը՝ «Փարիզից», եւ հ. 94-ից մինչեւ հ. 99-ը՝ «Տպավորություններ» վերնագրերով): Ինչպէս իրավացիորեն նկատում է Լեոն, եվրոպական քաղաքակրթությանը ծանոթացող Արծրունին ամեն անգամ շտապում էր հաղորդել իր տպավորությունները՝ ընթերցողին ներկայացնելով եվրոպական կյանքն ու մշակույթը:

Փարիզյան հուշերի մի մասն Արծրունին օգոստոսի 22-ից («Մշակ», 1889, հ. 94) սկսում է ներկայացնել «Տպավորություններ» խորագրով՝ պարզաբանելով, որ «Փարիզից» հուշագրության մեջ ինքը գերազանցապէս անդրադարձել է ցուցահանդեսին եւ գրողների կոնգրեսին, իսկ այժմ, արդեն վերադարձած լինելով Փարիզից, ուզում է ներկայացնել, խոսել Փարիզի փողոցա-

յին կյանքի մասին, ազգաբնակչության, գործի, ֆրանսիացու բնավորության մասին, քաղաքական երեւոյթների վերաբերյալ եղած հասարակական կարծիքի մասին, ֆրանսիացի կանանց դրության մասին, Փարիզի մամուլի մասին եւ այլն: Դատելով առաջարկվող ոլորտների ընտրությունից՝ ստացվում է, որ Արծրունին չի բավարարել նախօրոք տրված ինֆորմացիան, եւ նա ավելի է բացում փակագծերը՝ այս անգամ ոլորտ առ ոլորտ ներկայացնելով իր տպավորությունները: Հասկանալի է, որ այս դեպքում նա լրացուցիչ փաստերով կարող է «ներգործել եւ համոզել» իր ընթերցողին, հատկապէս որ ընտրել է կյանքի հենց այն ոլորտները, որոնց բարեփոխութեամբ ինքը շահագրգռված էր, մյուս կողմից ստացվում է ֆրանսիայի ներքին կյանքի եւ բնավորության մասին ինֆորմացիոն-տեղեկատվական մի փաստաթուղթ:

Հատկապէս ուշագրավ է այս հուշագրության՝ Փարիզի հայ

գաղթականությանը նվիրված հատվածը, ուր Արծրունին առանց թաքցնելու նշում է, որ հայկական մեծաթիվ համայնքի մեջ գրեթէ ոչ մի կապ ու համերաշխություն չկա: Նա հատկապէս շեշտում է սոցիալական տարբերությունը՝ տալով նաեւ հայտնի հայերի անուններ. «Իշխան Լուսինյան կամ Նուբար-փաշան առանձնացած են ապրում եւ չեն ընդունում իրենց մոտ ո՛չ հայ վաճառականներին, ո՛չ էլ հայ ուսանողներին» (1889, հ. 95): Եթէ, այնուամենայնիվ, Լուսինյան-Գալֆայանի մասին Արծրունին ընդգծված հակակրակներով չի խոսում, ապա նույնը չի կարելի ասել Նուբար-փաշայի մասին, ում համարում է «թուրք պաշտոնյա»: Նման վերաբերմունքի պատճառն այն է, որ Նուբար-փաշային համարում է հայ մտավորականությանը սիրալիր չընդունող մարդ՝ շեշտելով հատկապէս այն, որ վերջինս սիրում է հայերին քարոզներ կարդալ՝ «Թուրքիայի վրա չհարձակվել, որովհետեւ հայերը շատ երջանիկ

են թուրքիայում»: Սա արդեն հասկանալի է դարձնում նման վերաբերմունքի իրական դրդապատճառը, քանի որ Արծրունին իր բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներում ակնհայտորեն դրսևորել էր իր անբարյացակամ վերաբերմունքն այն հայ գործիչների հանդեպ, ովքեր նման կրավորական կեցվածք են ընդունում՝ պայքարի չմղելով արեւմտահայությանը:

Շարունակելի

Արշալույս ԳՆԱՍՏԱՆ
Բանասիրական գիտ.
թեկնածու, դոցենտ

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՔԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 18.7.2016 թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ